



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

U-15

Luc.

103

Op. IV zu. Makukonovo

2000

Հայ.
103

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՅՐԱՆՈՑԻ

Խաչ

ԳՐԱԲԱՐԻ

ՀԱՅՈՎՈՒՄԸ, ԿՈՆԱՐՀՈՒՄԸ

ԵՒ ՆԱԽԴԻՐՆԵՐԸ



Կ Ա Զ Ա Ց

Ա. Ս Ա Զ Ա Ց



Թ Ի Ֆ Լ Ի Ս
ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԵԼԻՆԻ ՓՈՂՈՑ, Տ. Ն. 1, 2.

1891

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ներսիսեան հոգեոր դպրանոցում հայերէն լեզուի դասատուութիւնն ստանձնելով՝ շուտով զգացինք քերականութեան յարմարաւոր ձեռնարկի պակասութիւնը, այնպիսի քերականութեան, որ լեզուի ստուգաբանութեան և համաձայնութեան կանոններն առաջարկէր աշակերտներին ոչ թէ իբրև անդիր սովորելու նիւթ, այլ բացատրէր և, աշակերտին մատչելի չափով, հետազոտէր այդ կանոնները, զգալ տար, որ լեզուն մի կամայական երեւցի չէ, այլ ժեռագույն է, հիմնուած, ինչպէս և ամեն գիտութիւն, որոց օրէնքների վերայ: Այս սկզբունքով կազմուած ձեռնարկը հարկաւոր է՝ որպէս զի աշակերտը հետաքրքրուի լեզուի ուսումնով, զիտակցաբար և դիւրաւ սովորի և միանդամայն զարգանայ:

Այսպիսի քերականական ձեռնարկի փորձը մեր մէջ առաջին անգամ արել է Պ. Կարապետ Կոստաննեսնը («Գրաբառ բայերի խոնարհումը մի աղիւսակի մէջ», «Գրաբառի հոդվումը մի աղիւսակի մէջ»), վերջինում Պ. Հեղինակը աշխատել է կանոնի տակ դնել այլ և այլ հոդվիչների գործածութեան պայմանները, և առանձին աղիւսակում զետեղել է բոլոր բառերը, որոնք բացառութիւն են կազմում այդ կանոններից—ծանր և շնորհակալութեան արժանի գործ): Մերը երկրորդն է, որ իւր նախորդից բաւական տարբեր է թէ նիւթի բովանդակութեամբ, թէ տեսականով և թէ աւանդելու ոճով:

Արոշելով մինչև դեկտեմբերի արձակուրդներն այս ձեռնարկը տրամադ տալ աշակերտների ձեռքը՝ ժամանակի սղութեան պատճառով մենք ստիպուեցանք բաւականանալ առ այժմ ամենակարևորով—հոդվումներով և խոնարհումներով և նոցա փոփոխութիւնները բացատրող համառօտ ձայնագիտութեամբ. աւելացրինք և նախդիրները, որոց տարբեր նշանակութիւնները այլ և այլ հոդվումների հետ գործածուելիս՝ մեծ դժուարութեամբ են ըմբռնում աշակերտները: Մենք չկարողացանք աւելի ընդլացնել ձայնագիտութիւնը և մտցնել համեմատութեան նիւթնոր գրականական լեզուից և գաւառական բարբառներից: Նոյնպէս

Дозволено цензурою, Тифлисъ, 4-го Декабря, 1890 года.

28-103

103-96

Типография И. Мартirosianца, Орбелиановская ул., домъ № 1-2,

չգետեղինք բացառութիւնները թէ՛ շեշտաբանութեան և թէ հոլովակութիւնը ու խոնարհումի մէջ և չհամեմատեցինք նոր լեզուային ձևերը գրաբարի ձևերին հետ, թողնելով սոքա և ուրիշ շատ հետաքննական նիւթեր ապագայ աւելի ազատ ժամանակի:

Հարկաւոր ենք համարում աւելացնել, որ այս ձեռնարկը, ինչպէս բովանդակութեան, նոյնպէս և մշակումի կողմից՝ զերծ չէ թերութիւններից, որոնցից գժուար էր խոսյ տալ՝ մի ամսուան մէջ սակաւաթիւններից, որոնցից գժուար էր խոսյ տալ՝ մի ամսուան մէջ: Համեմատական և կցկտուր ժամերում կատարուած աշխատութեան մէջ: Համեմատական եզրագիտութիւնը գուցէ դատապարտէ մի քանի բացարութիւններ այս ձեռնարկում (բաղաձան հոլովումի, բայցը արմատներին մէջ ևն), այս մենք նախընտրեցինք գիտական ճշտութիւնը տեղ տեղ զոհել պարզութեան և աշակերտների զարգացման աստիճանին:

Ձեռնարկիս § 56, 8ան. 2 և 3 և § 57, 8ան. 1. կազմելիս օգտուել ենք Պ. Կոստանեանի «Գրաբառի հոլովումից» (յօդ. 22, ա, 24, ա, 26, ա), իսկ § 10-ի և § 67-ի, ինչպէս նաև նախդիրների օրինակները մեծ մասամբ առել ենք Բագրատունու Զարգացելոց քերականութիւնից:

Ա. Յ.

14 Նոյեմբերի, 1890.

Թիֆլս:

ԳՐԱԲԱՐԻ ՀԱԼՈՎԱՒՄԸ

ԽՈՆԱՐՀՈՒՄԸ ԵՒ ՆԱԽԴԻՐՆԵՐԸ

Ա. ԶԱՅՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Պ. Ա. ՎՈՆԿ.

§ 1. Վանկ կոչւում է բառի այն մասը, որ արտասանում է բառի պարզ կամ երկբարբառ ձայնաւորին հետ միասին. օր. բարի, գերեզման, քաղաքամար, ձայնաւոր, նեղութեան, այսօր, իբրև, արջ, ջուր, խումբ, բազմագանձ: ԾԱՆ. Պարև ձայնաւորներն են ա, է, է, ը, ի, ո, ու, ու. երկբարբառներն են այ, այ, էա, էայ, իւ, ու:

§ 2. Որովհետեւ չ ձայնաւորը բառի մէջ տեղում և վերջում չէ գրւում՝ ուստի շատ անգամ բառերն ունին աւելի վանկեր, քան գրուածքին մէջ երեսում են ձայնաւոր գրեր. այսինքն չ ձայնաւորն էլ վանկ է կազմում, թէպէտ ներգործութեամբ գրուած չէ. օր. բանն (բանըն) զոր պատուիրեցեր. ահա այս (այ-բան) այն (այ-ձեզ), կրկին (կրկ-կին), սկիզբն (ըսկիզբն), ստանալ (ըստանալ), սնունդ (սընունդ), սրբել (սըրբել), հատուցումն, բղխումն (հատուցումըն), բրդ-խումըն), սոկը (սոսկը), աստղ (աստղը), կախը (կախսը): Այս տեսակ վանկերը կոչւում են ծածռակ վանկ:

§ 3. Վանկերը կոչւում են բայց երբ վերջանում են ձայնաւոր գրով. օր. բարի, եկի, արա, քաղաքացի: Կոչւում

Են կա՞յ երբ վերջանում են բաղաձայն գլուխ. օր, աղ-քատ, ջուր, թագ-չիմ, սուրբ:

§ 4. Եթէ ծածուկ վանկից անմիջապէս առաջ կամ լետոյ ձայնաւոր տառ գայ՝ այդ վանկը կարող է սղուիլ. օր. գանձդ ողորմութեան (գանձ-դո-զորմութեան). բղխումն ի հօրէ (բըղխում-նի հօրէ). աստղ առաւոտու, (աստ-դա-ռաւոտու), կամի ստանալ (կա-միս-տանալ):

ԳԼ. Բ. ՋԵՂՏ.

§ 5. Ջեշտ կոչւում է ձայնի սաստկութիւնը, որով հնչւում է բառի մէջ ձայնաւոր տառը. օր. տուր ինձ, թագաւոր է, թագաւորէ: Ջեշտի նշանն է այս (‘), որ սովորական դրութեան մէջ չէ գործածում, բացի հրամանական եղանակներից, արգելական մակրացից և անուղղակի հարցական ձևերից, օր. տուր, մի տար, տեսէք, որչափ սիրէք զնա:

§ 6. Ջեշտը լինում է երկու տեսակի, իմաստի և բառի: Իմաստի շնչառ խօսքի մէջ ընկնում է այն բառին վերայ, որի մէջ կենդրունանում է խօսքի զիխաւոր իմաստը, կամ որի վերայ առանձին ուշադրութիւն է դարձաւում, որ մանաւանդ պատահում է հակադրութեան ժամանակ. օր. ծանեաւ Եղա զստացիչ նոր, և Կշշ զմսուր տեառն իւրայ, բայց իսրայէլ զիս ոչ ծանեաւ: Ի՞մ է վրէժինդրութիւն: Զայշ տեսանեմ լինել այսպիսի:

§ 7. Եթէ խօսքին մէջ հակադրութիւն չկայ՝ իմաստի շեշտը գտնուում է բային վերայ. օր. որդիս Շնայ և բարձրացուցի, և նոքա զիս անարգեցին: Զելիինում մի տուալ ի կապանս:

§ 8. Բառի շնչառ ունին բոլոր բառերը, քիչ բացառութեամբ: Այս շեշտը դրաբարում գտնուում է բառի վերջի վանկին վերայ. օր. Տիկնալք փափկասունք Հայոց աշխարհին: Զանոպան խաղացունս աստուածայնոցն ի քեզ շնորհաց... ծանեայ ի ձեռն գեղեցիկ խնդրով:

§ 9. Թիմորոշ յօդերի (ս, դ, ն) բառերի վերջն աւելանալով յաջորդ բառի բաղաձայն տառից առաջ նոր վանկ են կազ-

մում (լս, ըդ, ըն). բայց շեշտը այդ նոր վանկին վերայ չէ դրուում, այլ մնում է իւր նախկին տեղում, արմատական վանկին վերայ. օր. կինս (կինըս) զոր ետուր: Որոց ոգիքն (ոգիքըն) թուլացեալ են:

§ 10. Մի քանի բարդ և ածանցուած բառեր պահում են շեշտը բարդութեան առաջին մասին վերայ. սոքա են. այսպէս, սոնապէս, որպէս, այսչափ, որչափ (հարցական), այսքան, այսգոյն, այլազդ, յախնժամ, քանիօն, զրեթէ (զրեա-թէ), հապա, բարէ, ահաւասիկ (ահա-աւասիկ), աւասիկ, նոնժամայն, այսորիկ, այսոցիկ—բոլոր դէմքերում: Կոյնապէս և գիմորոշ յօդ ունեցող բառերը (§ 9) և ծածուկ վանկով վերջաւորուած բառերը շեշտ չունին վերջին վանկին վերայ. օր. քաղաքըն, տունըն, ազգումըն, կայսրը: Այս բառերը, նայելով, թէ որտեղ է գտնուում շեշտը կոչւում են յարշէշտ (վերջից երկրորդ վանկում) և նոնչայրշէշտ (վերջից երրորդ վանկում):

§ 11. Մի քանի կարճ բառեր ամենևին շեշտ չունին և կոչւում են անձէշտ. սոքա են

ա) յարաբերական և անորոշ գերանունները որ, ինչ, ինչ, մի. օր. որ սպանանէ զհայը՝ մահու մեռցի. Որոց ոգիքն. Մեծ իմն. Գեղեցիկ իմն. Բազում ինչ ամեն. Բարոնք ինչ իցէ. Ալ մի. Ի խոռոշ մի:

բ) ի, առ, ընդ, ըստ նախկինները և լիբե, որպէս, ժան, մնչե, վասագրութիւնները. օր. ի տուն. ի լինել. առ ի լինել. առ նախանձու. ընդ գուռն. ընդ աջմէ. ըստ նմանէ. իբրև զիս. որպէս ծառ. քան զամենայն մեծութիւն. քան զականս պատուականս. մինչեւ ի տուն. մինչեւ ցայս վալը. վասն իմ. վասն այսորիկ:

գ) է՛մ բայլ՝ երբ իւր բուն նշանակութիւնն ունի. օր. նա է. յաշխարհ գալոց էիր. տեսեալ է. ընկեցեալ լինէր այնուհետեւ: Իսկ երբ է՛մ բայլ նշանակում է կամ, գոյութիւն ունի՝ առնում է շեշտ. օր. է նա. է. Աստուած. Ե՛ն որ ի ծակս, Են որ ի սորս զօղեալ թագչին:

դ) ւել, լեկ, ելուկ, և, ի՞սմ շաղկապները. օր. զի՞՞նչ գոյր. նչ գիտէին, թէ գալո՞ց է. եթէ ակն քո չափ է. և ասաց Աստուած. եղբայր կամ քոյր:

§ 12. Միմեանց հետ յարնչութիւն ունեցող բառերից երբ նախադասը շեշտուած է՝ վերջադաս բառը եթէ միավանլ կամ երկավանկ դերանուն լինի՝ շեշտը կկորցնէ. օր. վասն մեղաց քոց. յաթուու նորա. եթէ ասիցէ՛ ոք. ամէ՛ ցնա. յափշտակեցան ստացուածք նոցա:

§ 13. Սաստիկ շեշտուած բառերից յետոյ, այսինքն հարցական, բացասական, հրամայսկան բառերից և առհասարակ իմաստի շեշտից յետոյ՝ հետեւորդ բառը շեշտը կորցնում է. օր. զի՞ կոչէք դիս. ընդէ՛ր խոռվեցան հեթանոսք. նչ գիտէ՛ր, զի՞նչ գործէ՛ր. նչ ալդպէս. նչ լուեցից. չի՞ք թագաւոր. մի՞ դատիք. մի՞ ընկենուր: Ե՛ս ասացի (և ոչ դու). բաղնումք յօժարեցին. յանգիւտ կորուստն յուղարկի ի մահուան իւրում:

ԳԼ. Գ. ՃԵՂՏԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ 203ՆԵԽՈՐՆԵՐԻՆ ՎԵՐԱՅ.

§ 14. Զայնաւոր զրերը, ինչպէս և բաղաձայները, լեզուի երկարատև կեանքում՝ հետզհետէ սղում և վերջ ի վերջոյ անհետանում են. օր. գիր—*զիրել¹), գըրել, զըրել. տռունկ, *տռունկել, տռնկել, տռնկել. աստուածպաշտութիւն (փոխանակ *աստուածպաշտութիւն), արծաթսիրութիւն (փոխանակ *արծաթսիրութիւն). եւղ—իւղ—եղ, գեաւղ—գեւղ—զիւղ—զեղ, տեսլարան (տեսլարան), *տիալր—*տեալր—տէր. միջօրեալ—միջօրէ. *բաշխել—բաշխել—բաշխել—բխել. գործեալ, աղա—(*գործեաց, *աղաց). կա, արա—(կալ, *արալ): Կոյն երեւոյթը աւելի յաճախ կերեւի, եթէ համեմատելու լինինք գրաբարի ձեւերը աշխարհաբարի և մանաւանդ գաւառական բարբառների հետ, որոնք աւելի երկար զործածուելով աւելի շատ են մաշ-

¹⁾ Աստղանիշով նշանակուած ձեւերը գրաբարում չեն պատահում, բայց ենթադրում են իբրև եղած:

ուել, մինչդեռ զրաբարի ձեւերը 1500 տարուց ի վեր զրի առնուած լինելով՝ համեմատաբար քիչ են փոխուել: Օր. գրաբար աղքատի. գաւառական՝ աղքատի, զրբ. քաղաքացի. գւոկն. քաղաքցի¹). զրբ. Աստուած, գւոկն. Աս.քօծ, Աստու.ծ. զրբ. Աստու.ծոյ, գւոկն. Աստու.ծու, Աս..ծու. զրբ. տեսանեմ, աշխարհաբար՝ տես.նեմ, գւոկն. տեհ.նեմ, տէ.նիմ. զրբ. ճանապարհ, գւոկն. ճան.պարհ, ճան.պար., ճաճ.պար., ճամ.պար., ճամ.քա., զրբ. երթալ, գւոկն. ե.թալ և այն:

§ 15. Այն վանկերը, որոց վերայ ընկնում է շեշտը՝ աւելի են դիմանում ժամանակի և զործածութեան մաշող ոչին. իսկ այն վանկերը, որոնք շեշտ չունին՝ աւելի են ենթարկում սղումի և անհետանալու: Օր. սուրբ—ուրբել. որի մէջ առաջի բառում ու ձախնը շեշտ ունենալով՝ մնացել է, իսկ երկրորդ բառում շեշտը տեղափոխուելով եւ վանկին վերայ՝ ու ձախնաւորն առանց շեշտի սղուել է և նոյնպէս կէն—կընոջ—կ.նոջ. մարմին—մարմընոյ—մարմ.նոյ և այն:

§ 16. Բառերը հոլովուելիս և խոնարհուելիս՝ իրանց վերջից ստանում են մասնիկներ. և որովհետև շեշտը, համաձայն լեզուի օրէնքին՝ պէտք է զրուի բառի վերջի վանկին վերայ՝ (§ 8) ուստի շեշտը բառի հոլովուելիս և խոնարհուելիս՝ տեղափոխում է այդ նոր մասնիկներին վերայ: Այդ տեղափոխութեան պատճառով բառի այն վանկը, որ առաջ շեշտ ունէր, շեշտը կորցնելով՝ յաճախ սղուում է. օր. սէ՛ր բառը փոխում է սիրմի, սիրեմ, բայց՝ մարդասէ՛ր. մռատ—մըտի, մ.տից, մ.տանէ՛մ, բայց՝ եմռատ և այն: Վերջի օրինակից երեւում է, որ երբ խոնարհուելու ժամանակ բառը ստանում է այնպիսի ձև, որ մասնիկ չունի, ուրեմն և շեշտը նորից ընկնում է բուն արմատուկան ձախնաւորին վերայ՝ այդ արմատի նախնական ձախնաւորը նորից երեան է գալիս (եմռատ):

§ 17. ա, է, և ձախնաւորները վերջի փակ վանկում գտնուելիս

¹⁾ Այտը բառի մէջ նշանակում է, թէ այդ տեղում զիր է դուքս ընկած:

երբ շեշտը կորցնում են փոփոխութեան չեն ենթարկում շեշտի
պատճառով. օր. քաղաք—քաղաքի, բանակ—բանակի, բանակիմ,
բանակեցակ. մէջ—մէջի, մէջանամ, մէջացոցանեմ. տէս—տէսով,
տէսանեմ, գործ—գործով, գործեմ, գործեցի. խաղող—խաղողի:
Այս ձայնաւոր գրերը զուտկանների վերջում բաց վանկում ա-
մենևին չկան, այլ եթէ գտնուին՝ փոխում են ուղիշ ձայնաւորի
կամ երկբարբարի օր. Արամ-ա-յ, օդ-ո-յ: (Ապատահում է միայն
իս վերջաւորութեան մէջ. օր. Երեմիա, Գաղղիա, Ամասիա):

՞Այս. 1. Բայերի մէջ ո և ա պատահում են միայն հրամայական եղանակում—մատո՛, արա՛:

ՏԱՅ. 2. Ե զիրը մի քանի տեղ, երբ հետեւում են նորան երկու բաղաձայն՝ սղուում է և զրի և անհետանուած է. օր. ասեղն—աս.զան, թիթէ՛ղն—թիթ.զան և այլն:

§ 18. Ի և ձայնաւորները, սրոնք գտնվում են բառի վերջի փակ վանկում՝ շեշտը կորցնելիս՝ փոխում են չ, որ շատ անդամ սղուելով բոլորովին անհետանում է. օր. զին—դընոն (գնոյ), սիրտ — սըրտի (սրտի). գի՞նդ — գընդի (դնդի). խի՞նդ — խընդալ (խնդալ). Գաւէ՛թ — Գաւ.թի. գաւէ՛թ — գաւ.թի. թաք՛ւստ թաքըստի. աճ՛ւմն — աճ.ման, սռ՛սրբ — սը ըրպի, սըրբել (սրբով սրբել). գու՞նդ — գընդի. (դնդի). զու՞տ — զըտի, զըտել (զտի, զտել). հեղումն — հեղդ.ման. տռ՛ւն — *տրաման — տ.ան և այլն:

՚ԾԱՆ. Աւատ, ուղտ և այն բառերում ու ձայնը անշեշտ վանկում սովորաբար չէ սպռում:

§ 19. Վերջին փակ վանկում եղած է ձայնաւորը շեշտը կօրդնելով՝ գտանքում մէ.

1) է. օր. սեղ—սեղով—սեղել. յաւետ—յաւետեան, ձեթ—ձեժով. դետ—դետի—դետել.

2) Թառնում է և է, մանաւանդ օստաբազի լատուկ անուն-ների մէջ. օր Խըրայէլ—Խըրայլի (և Խըրայլի). Կայէն—Կայէնի, Սիքայէլ—Սիքայլի, Մովսէս—Մովսէսի (և Մովսէսի). Կայ նոյն-պէս եղէ՛քն և եղեղան, աղուէս, —աղուէսու:

§ 20 Վերջին փակ փանկում գտնուող էս երկբարբառը շեշտը կորցնելիս դառնում է է, օր. մատեն—մատնի, ատեն'ն — ատենի,

սէամ—ումնի. եղեմն—եղեման, կէանք—կէնաց, կէամ—կէցի:

ԾԱՆ. Այս սղումով բացատրւում է և բարդ բառերի մէջ պատահած է զիբը արմատական է գրին տեղ. բարեսէր=բարեսէր=բարեսէր (§ 26, դ.) ընտանէկան=ընտանէան=ընտանէ սկան:

§ 21. Վերջին փակ վաճառմ գտնող ու երկրարքառը շեշտի կրպցնելիս գառնում է ու. օր. բայն—բանոց. լրցու—լրասոնի լրասունը. փոյժթ—փոյժնի, փոյժնի. ողջոյն—ողջոյնի, ողջոյնել. մրց—մրածի, մրածանել և ալին:

§ 22. Փակ գանկում դառնուազ է- երկրաբբառը, որից յետով գալիք է աշխատը կրպցնելիք գառնում է ի. օր. արեւա-
աբեան (=արի-ան, § 26 դ), կորհան—կորեան. Նեղութիւն—
նեղութեան և այն:

§ 23. Վերջին բաց վանկ կազմող է- (իվ) երկարքառը շեշտը կարցնելիս գառնում է առ. օր. թի՛—թառնի, թառել, անի՛—անռնի, տի՛—տռնի, տռել. վաղի՛—վաղռեանն և այլն:

§ 24. Վելչին բաց վանկ կազմող եաց (և եա) երկրաբրառը շեշտը կորցնելի ս դառնում է և. օր. ամսօրեաց—ամսօրեի. միջօրեաց—միջօրեի. դուզնառքեաց—դուզնառքի. առհաւատչեաց—առհաւատչի:

§ 25 Պատկեր շեշտաւոր և անշեշտ ձայնաւորների: (Կիծը
(—) սշանակում է, թէ ձայնաւորը կրստած է):

ՎԼ. Դ. ԳՐԵՐԻ ՓԱՓՈԽՍՊԻԹԻՒՆԸ ՄԻՄԵԱՆՅ ՄՈՏ ՊԱՏԱՀԵԼԻՍ.

§ 26. Զայնաւոր և բազաձայն գրերից ոմանք միմեանց մօտ պատահելիու ենթարկում են մէկը միւսի ազգեցութեան և այլ և այլ փոփոխութիւններ են կրում: Այս փոփոխութիւնները, որոնք առաջ են գալիս ա՞րդաշնակութեան օբենորդ՝ (որպէս զի արտասանելը դիւրին լինի) շատ տեսակ են և բազմաթիւ պատճառներ ունին, որոնք մանրամասն ուսումնասիրում և հետազոտում է լեզուագիտութիւնը: Այսուղ գրուած են միայն այն փոփոխութիւնները, որոնք բառերի հոլովումի և խոնարհումի ժամանակ տեղի են ունենում, որպէս զի հասկանալի լինին քերականութեան ընդհանուր կանոններին հակառակ թուող խոտումները:

§ 27. Զայնաւոր գրերի մէջ, հոլովիլու և խոնարհելու ժամանակ, հետևեալ փոփոխութիւններն են տեղի ունենում.

ա) Երբ միմեանց մօտ գալիս են ու և ի, և շեշտ չունին փոխում տալիս են երկրարբառ. այ. օր. աղա-ից-եմ=աղացեմ=աղացեմ. ընթանաց-եմ=ընթանացեմ:

բ) Երբ միմեանց մօտ գալիս են ու և ի, և շեշտ ունին իրանց մէջ ընդունում են յ ներդաշնակութեան գիրը. օր. աղա-ի=աղայի. բանա-իր=բանայիր: Առա-ին=սորային:

գ) Երբ միմեանց մօտ գալիս են ու և ի (ոի)՝ փոխում են յ երկրարբառի. օր. ու-ին=ոյն, դր-ին=դրյն:

դ) Երբ միմեանց մօտ գալիս են և ո՝ (իա) փոխում են է մ երկրարբառի. օր. որդի-ակ=որդէ-ակ. բարի-աւ=բարէ-աւ. նեղութէ-ան=նեղութէ-ան:

ՌԱՆ. Եմ երկրարբառն ստացում է նաև է ձացնի աճումից շեշտի տակ. օր. գործեց=գործեաց, սիրեց=սիրեաց.

ե) Երբ միմեանց մօտ գալիս են և ո՝ (իօ)՝ տալիս են յ երկրարբառը. օր. բարի-ր'ք=բարի՛ք=բար-ք. տեղի-ր'յ=տեղ-յի: Միավանկ բառերն այս օրէնքին չեն ենթարկում. օր օր. մի-ոլ, մի-ով:

զ) Երբ միմեանց մօտ գալիս են և ի՝ (եի)՝ ե-ը փոխում է ի. օր. գործե-ի=գործեի=գործեի՝ սիրե-ի=սիրեի:

§ 28. Զայնաւոր գրերը կալող են ամիւ, այսինքն կարճ ձայնաւորից երկար գառնալ, կամ պարզ ձայնաւորից երկրարբուու: Աճումը տեղի է ունենում շեշտ տակ. (օր. գործե՛ց=գործե՛ց, սիրե՛ց=սիրե՛ց): Կամ երբ մի բաշտյան գիր էր մարդու մասին այլ պատճառով նորա մօտի ձայնաւորն երկարում է. օր. մայր (եղել է առաջ * մատը ¹), ա-ն ընկնելով ստացուել է մար=մայր). գործե գործեք. (եղել է առաջ * գործեա, գործեաք ²), ա-ն ընկնելով է ձայնաւորը երկարել դարձել է ի). աղայ. աղայք (* աղաա, աղաաք=աղայ, աղայք). կանայք=կանանք:

§ 29. Բազմաձայն գրերի մէջ հոլովումի և խոնարհումի ժամանակ տեղի են ունենում հետեւեալ փոփոխութիւնները.

ա) Երբ միմեանց մօտ գալիս են և ի գրերը՝ և փոխում է լ-ի (որովհետև լ-ն շրթնալին տառ է՝ ուստի և էլ շրթնալին է դառնում). օր. նեղութեան-ի=նեղութեանը=նեղութեանը. աղեղան-ր=աղեղանը: Համեմատել ամբիծ=ան-րիծ, ամբարիշտ=ան-բարիշտ, ճամ. բայ=ճանապարհ:

բ) Երբ միմեանց մօտ գալիս են լ և արմատական և լ գիրը սաստկանում դառնում է ո. խոկ երբ այս ա-ն ն-ից հեռանալ՝ նորից դառնում է լ. օր. լերին=լեառն. դրան=դռւռն. այր=առն, արանք (§ 29, ա), առանեմ=առ-արի:

զ) Երբ միմեանց մօտ գալիս են երկու յ, որոց երկուքն էլ բառի ըուն արմատին չեն պատկանում առաջին յ փոխում է ա. օր. գործեց-յուք=գործեցյուք=գործեցյուք. (արմ. գործ), սիրեց-յուն=սիրեցյուն (արմ. սիր):

¹) Համեմատել հին ոռուերէն մատեր, (մաтери).

²) Համեմատել ոռուերէն ճելատե, ճելаете.

Բ. ՀՈԼՈՎՈՒՄ

Ա. Ե. ՀՈԼՈՎՆԵՐ.

§ 30. Գոյական և ածական անուններն ու գերանունները խօսքի մէջ յարաբերութիւն ունին միմեանց հետ և բայի հետ և այլ պաշտօններ են վարում. երբեմն նոքա ցոյց են տալիս, թէ ով է կատարում գործողութիւնը. օր. Առգուստով գալ. ու գալ. երբեմն ցոյց են տալիս, թէ որի վերայ է ընկնում գործողութիւնը. օր. տեսի Առգուստով, սիրեմ շա. երբեմն ցոյց են տալիս, թէ մի առարկայ որին է պատկանում. օր. սիրտ Առգուստով, զինուորք Առգուստով. ձեռք առտ. երբեմն ցոյց են տալիս, թէ գործողութիւնը որի օգնութեամբ կամ ձեռքով է կատարում. օր. Առգուստով շինի աշխարհ. առջաւ կեանք էր: Այս տարրեր նշանակութիւնները արտադարտելու համար գոյական և ածական անուններն ու գերանունները վերջից և սկզբից փոփոխութիւններ են կրում (թագաւոր—շթագաւոր, թագաւորի, թագաւորու. նա զնա, նորա, նորչա), որոնք կոչում են հոգուամ, իսկ փոփոխուած ձևերը կոչում են հոշով:

§ 31. Հայերէն դրաբար լեզուն ի՞ց հոլով ունի. 1) առջանձան, որ առարկայի անունն է և պատասխանում է ո՞վ, զի՞նչ Հարցմունքին. (թագաւոր, մեծ, նա). 2) հոյցական, որ ցոյց է տալիս, թէ ում վերայ է ընկնում գործողութիւնը, և պատասխանում է ո՞վ, զի՞նչ Հարցմունքին. (զթագաւոր, զմեծ, զնա). 3) աւագան, որ ցոյց է տալիս, թէ որ առարկային է պատկանում բառը, և պատասխանում է որո՞յ Հարցմունքին, (թագաւորի, մեծի, նորա). 4) արագան, որ ցոյց է տալիս, թէ ում համար է կատարում գործողութիւնը, և պատասխանում է ո՞ւշ Հարցմունքին. (թագաւորի, մեծի, նմա). 5) բացառական, որ ցոյց է տալիս, թէ ումից է սկսում, առաջ դադիս գործողութիւնը, և պատասխանում է յամից, առաջի Հարցմունքին (ի թագաւորէ, ի մեծէ, ի նմանէ). 6) գործիական, որ ցոյց է տալիս, թէ որի ձեռքով կամ միջոցով է կատարում գործողութիւնը, և պատասխանում է

էու, էու իւչ Հարցմունքին (թագաւորաւ, մեծաւ, նովաւ): Այս հոլովներից ուղղականը և Հայցականը կոչում են ուշիշ հոլովներ, իսկ միւսները կոչում են լեչ հոլովներ:

§ 32. Բառերը կարաղ են նշանակել նաև մի առարկայ կամ մէկից աւելի առարկայ. օր. որդի թագաւորի (մի թագաւորի մի որդի) և որդից թագաւորաց (շատ թագաւորների շատ որդիներ). ձեռք (մի ձեռք) նորա, ձեռք (երկու կամ աւելի ձեռք)նորա. նա ասէին: Այս փոփոխութիւնը, որ առարկայի մի կամ շատ լինելն է ցոյց տալիս՝ կոչում է լեչ:

ՅՅ. Գրաբար լեզուն ունի երկու թիւ. 1) էղոնի, որ ցոյց է տալիս, թէ առարկան մի հատ է. (թագաւոր, ձեռն, նա) և 2) յոգոնի, որ ցոյց է տալիս թէ առարկան մէկից աւելի է. (թագաւորք, ձեռք, նորա):

§ 34. Հոլովիւու, այլինքն բառը հոլովով և թուով փոփոխելու ժամանակ՝ նկատելու է բառ բառ, արմառ, հողովիչ յայնուածուացուցիչ գրերը:

§ 35. Բառ կոչում է բառի այն ձեւը, որով մենք կոչում ենք առարկան. օր. բան, գործ, սուրբ:

§ 36. Արմառ կոչում է բառի այն ձեւը կամ այն մասը, որ բոլոր հոլովների մէջ, թէ եղակիում և թէ լոգնակիում գտնուում է. օր. բառ, բանի, բանիւ, ի բանէ, բանք, զբանս, բանից, բանիւք. գործ, գործոյ, գործով, ի գործոյ, գործք, գործոց, գործովք, սիրո, սրոր, սրուիւ, ի սրոէ, սիրոք, սրուից, սուրբ սրբով, սուրբք, սրբոց, սրբովք: Այս օրինակների մէջ բառ, գործ, սրո, սրբ ձեւերը կոչում են արմատ, որովհետեւ ամեն մի հոլովի մէջ ևս գտնուում են:—Սորանից երկում է, որ արմատը երբեմն նման է լինուի բունին (ինչպէս բան, զործ), երբեմն բունից տարբեր (ինչպէս բուն՝ սիրո, արմատ սրո. բուն՝ սուրբ, արմատ սրբ):

§ 37. Բունից արմատը կազմելիս բառերն ենթարկում են շեշտի օրէնքներին, որոնք բացատրուած են §§ 18—24, այնպէս որ

շեշտուած բունից	ստացւում է անշեշտ արմատ
անսաթ՝ն, բազր՝մ	» անսան, բազմ
անկողի՝ն, գետի՝ն	» անկողն գետն (§ 18)
մարդասէ՛ր կէ՛տ	» մարդասէր, կէտ (19, 1)
Միքայէ՛լ, աղուէս	» Միքայէլ, աղուես (19, 2)
եղէմն, մատէա՛ն	» եղէմն, մատէն (20)
տարակր'յս, բռ'յն	» տարակրոս, բռն (21)
նեղութէ՛ն, արի՝ն	» նեղութին, արին (22)
անի՛տ, թէ՛տ	» անու, թու (23)
աշտէա՛յ գուզնաքէ՛յ	» աշտէ՛ գուզնաքէ՛ (24)

§ 38. Այն բառերը, որոնք վերջին փակ փանկում ունին ա, ե, ո, ձայնաւորները՝ շեշտի ազդեցութեան չին ենթարկում (§ 17). ուստի նոցա բունը և արմատը նման են միմեանց. օր.

շեշտուած բուն	անշեշտ արմատ
քաղա՛ք, բռ'ն	քաղա՛ք(ի), բռն(ի)
ժողով, գործ	ժողով(ոյ), գործ(ոյ)
արէթ, մէծ	արէթ(ի), մէծ(ի).

ԾԱՆ. Փակ փանկում է ձայնաւորն ունեցող մի քանի բառեր ենթարկում են շեշտի ազդեցութեան և ուրմատը կազմում են առանց է-ի. օր. բուն՝ ասէղն, արմ. ասղն. բուն՝ թիթէղն, արմ. թիթղն. (տես § 17, ծան 2):

§ 39. Հոլովիչ կոչում են այն չայն չայնուոր գրերը, որոնք գըրւում են բառի արմատին վերայ, հոլովներ կազմելու ժամանակ. օր. սրտի, աղուեսուու, աղեղուուն, ժողովուու և այլն: Հոլովիչ ձայնաւորներն են ա, է, ի, ո, ու:

ԾԱՆ. 1. Երբ և ո հոլովիչները հոլովական բառի վերջում են պատահում շեշտի տակ աճում դառնում են այ, ոյ, (§ 28):

ԾԱՆ. 2. Երկրորդ խառն հոլովումի մէջ (տես § 44) շատ անդամ (ոյ) հոլովիչին տեղ գործածում է ոչ:

ԾԱՆ. 3. Ե հոլովիչը պատահում է միայն բաղաձայն հոլովումի մէջ. (տես § 42):

§ 40. Հոլովակերտ կոչում են այն ձայնաւոր և բաղաձայն գրերը, որոնք գրւում են բառի վերջը հոլովիչից լետով:

որոշեալ հոլով կազմելու համար: Հոլովակերտ գիր առնում են բացառականը և զործիականը, իսկ գերանունների մէջ՝ նաև սեռականը և տրականը: Բացառականի հոլովակերտ գիրն է: Գործիականի հոլովակերտ գրերն են ա, է, օ, որոնցից է գործ է ածում բաղաձայնից լետով, չը գործ է ածում և ձայնաւորից լետով, իսկ մնացած դէպքերում: Գերանունների մէջ սեռականի հոլովիչն է բ, տրականի հոլովիչն է օ: ԾԱՆ. Ո-հոլովիչն ունեցող բառերը գործիականում հոլովակերտ չեն առնում:

§ 41. Յունականացայուցիչ գրերն են ա, օ, ո: Ք գործ է ածում ուղղականում և գործիականում, յ սեռականում, տրականում և բացառականում, իսկ ՚ հայցականում:

Գլ. Զ. ԱՆՈՒՄԱՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ.

§ 42. Գոյական և ածական անունները հոլովուելիս՝ հոլովիչ գրը (§ 39) դնում են կամ արմատից լետով, կամ արմատի վերջին բաղաձայնից առաջ, օր. տիզմ—(արմատ՝ տղմ) տղմ-ի, զրաստ—զրաստու ձևերում է և ո հոլովիչները դրուած են այլ և գրաստ արմատների վերջը: Իսկ աղեղն—աղեղուուն, կայսր—կայս-է-ր ձևերում և և է հոլովիչները դրուած են արմատի վերջին բաղաձայն և լ գրերից առաջ: Առաջին տեսակ հոլովումը կոչում է չայնուոր հոլովում, որովհետև բառը վերջանում է ձայնաւոր հոլովիչով. Իսկ երկրորդ տեսակը կոչում է բաղաձայն հոլովում, որովհետև բառը վերջանում է արմատի բաղաձայն գրով:

ԾԱՆ. Բաղաձայն հոլովում ունին այն բառերը, որոնք վերջում ունին են, բաղաձայն և ա, բաղաձայն և օ, բաղաձայն և շ (օր. նեղութիւն, արիւն, աղեղն, եղէգն, կայսր, աստղ) և ուրիշ բառեր, որոնք բունի սկզբնական և կորցրել են, իսկ արմատում պահել են. օր. մանուկ—մանկան (բուն՝ մանուկ, փոխանակ՝ մանուկն, արմ. մանկն). գարուն—գարնան (բուն՝ գարուն, փոխանակ՝ գարունն, արմ. գարնն): Համեմատել աշխարհաբարում եզ, ձուկ, գուռ—եղան, ձկան դրան, եղեր, ձկներ, գուներ (գրաբար՝ եղն, ձուկ, գուռն):

§ 43. Եթէ բառը թէ եղակի և թէ լոդնակի բբլոր թեք

Հոլովներում գործ է ածում մի հոլովիչ՝ կոչւում է պարզ հոլովում, օր. գործ—գործոյ, գործով, գործոց, գործովք, աղեղն աղեղն, յաղեղնէ, աղեղմը, աղեղանց, աղեղմբք և այլն: Իսկ եթէ հոլովուելիս գործ է ածում էրիու հոլովիչ՝ կոչւում է իտու հոլովում. օր. քաղաք, քաղաքի, քաղաքու, գառն—գառն, դառնաց:

§ 44. Երկու խառն հոլովում կալ. առաջինը գործ է ածում և և ա հոլովիչները, երկրորդը՝ և և հոլովիչները: Սոցանից և և ա հոլովիչները գործածում են եղակի սեռական, տրական և բացառական հոլովներում, իսկ ա հոլովիչը գործածում է եղակի գործիական և յոգնակի թեք հոլովներում: Ուրեմն եթէ մի բառ յոգնակի թեք հոլովում ունի ա հոլովիչը եղակի սեռականում նա կարող է ունենալ ա հոլովիչ եթէ պարզ հոլովում ունի, և ի կամ ա հոլովիչ՝ եթէ խառն հոլովում ունի. օր. աղեղնց—եղակի սեռ. աղեղն, քաղաքոց—եղ. սեռ. բարոյ:

ԳԼ. Է. ՀՈԼՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ.

§ 45. Եղակի ուղղականը բառի սկզբնական ձևն է (բուն) առանց օր և է յաւելուածի, օր. մարդ, սիրտ, աղեղն:

§ 46. Եղակի հայցականը նման է ուղղականին: Եթէ բառը որոշուած է՝ սկզբից առնում է որոշիչ չ նախդիրը, օր. մարդ, սիրտ, աղեղն, կամ զմարդն շայն, պիրտ ե-ր, շաղեղն ե-ր:

§ 47. Եղակի սեռականը և տրականը կազմւում են՝ արմատին վերայ աւելացնելով հոլովիչ ձայնաւորը. օր. մարդոց (§ 39, 1), սրտ-ի, աղեղ-ո-ն (§ 42):

§ 48. Բացառականը կազմւում է տրականից հետեւեալ կերպով.

ա) Բաղաձայն հոլովումի մէջ՝ տրականի վերջը դրւում է է:

բ) Ձայնաւոր հոլովումի մէջ՝ ա հոլովիչն ունեցող բառերի տրականից յետոյ դրւում է է, օրի ժամանակ մեծ մասամբ ա հոլովիչը դուրս է ընկնում:

գ) ի հոլովիչ ունեցող բառերը դուրս են ձգում հոլովիչը և տեղն առնում են է:

դ) ա և ա հոլովիչ ունեցող բառերի մէջ բացառականը վերջաւորութեամբ նման է տրականին:

ե) Եւ առհասարակ ամեն դէպքում բառի սկզբից դրւում է ի նախդիրը, օր փոխում է յ-ի, եթէ բառն սկսում է ձայնաւոր զրով:

Օրինակներ. ա) կայսր, տրակ. կայսեր, բացառ. ի կայսերէ. աղեղն, տր. սղեղան, բաց. յաղեղանէ. բ) զրաստ, տր. զրաստու, բաց. ի զրաստ-է, ի զանձէ. գ) քաղաք, տր. քաղաքի, բաց. ի քաղաքէ. արքայ, տր. արքայի, բաց. յարքայէ. դ) չայկ, տր. չայկայ, բաց. ի չայկայ. զետ, տր. զետոյ, բաց. ի զետոյ:

§ 49. Եղակի գործիականը կազմւում է՝ արմատին վերայ աւելացնելով հոլովիչը և գործիականացուցիչը (§ 40). այս դէպքում եթէ բաղաձայն հոլովումի վերջի արմատական բաղաձայնը չ է՝ փոխում է յ (§ 29, ա). օր. բան-ի-ւ. զետ-ո-ւ աղեղ-ա-մ-ը, (փոխանակ աղեղ-ա-մ-ը), նեղութե-ա-մ-ը, (փոխանակ նեղութե-ա-մ-ը, § 27 դ):

§ 50. Յոգնակի ուղղականը կազմւում է՝ բունին վերայ աւելացնելով չ. օր. բան-չ, սիրտ-չ, արքայ-չ:

ԴԱՆ. Բաղաձայն հոլովումի մէջ այն բառերը, որոնք վերջանում են երկու կամ երեք բաղաձայն գրերով յոգնակի ուղղականում բունի վերջին բաղաձայնից առաջ աւելացնում են ներդաշնութեան շոյնութեան (որպէս զի դիւրահնչելի լինի բառը) և, է, ա, օրոնք երբեմն համապատասխանում են հոլովիչն և երբեմն ոչ. օր. աղեղ-ո-նք (փոխանակ աղեղնք), աստ-է-զ-ք (փոխանակ աստղք), գառ-է-ն-ք (փոխանակ գառնք) կողմ-ո-ն-ք (փոխանակ կողմն-ք):

§ 51. Յոգնակի հայցականը կազմւում է յոգնակի ուղղականից վերջի չ-ն փոխելով յ-ի. օր. բան-յ, սիրտ-յ, արքայ-յ, աղեղուն-յ, աստեղ-յ: Եթէ բառը որոշուած է՝ հայցականն ստանում է սկզբից որոշիչ չ նախդիրը (§ 46):

§ 52. Յոգնակի սեռականը և տրականը կազմւում են՝

արմատին վերայ աւելացնելով հոլովիչը և յոդնականացուցիչը (§ 41). օր. բան-ի-ց, քաղաք-ա-ց, գործ-ո-ց, աղեղ-ա-ն-ց:

53. Յոդնակի բացառականը կազմւում է յոդնակի տրականից, սկիզբն աւելացնելով ի կամ չ նախորդը (§ 48, ե). օր. ե բանից, ի քաղաքաց, ի սրտից, յաղեղանց:

§ 54. Յոդնակի դործիականը կազմւում է արմատին վերայ աւելացնելով հոլովիչը, դործիականացուցիչը (§ 40) և յոդնականացուցիչը (§ 41). օր. բան-ի-ւ-ք, քաղաք-ա-ւ-ք, սրտ-ի-ւ-ք, աղեղ-ա-մ-ք (§ 29, ա):

ԾԱՆ. Յոդնակիում աւ ձայնը, ինչպէս և բոլոր փակ վանկերում, նոր գրութեան եղանակով գրում է օ—քաղաքօք, օր, օրհնել, (փոխանակ քաղաքոք, աւր, արհնել):

§ 55. Կանոնաւոր հոլովումի պատկեր:

Հայնաւոր պարզ հոլովում		Զայն. խառն հոլով.		Բայն. խառն հոլով.		Ալովի. պարաձ. պարաձ.		Բաղաձան հոլով.		Բաղաձան հոլով.	
Հոլովիչ	աւ	ա	ի	աւ	ի, ա	ի, ա	ի, ա	ա	ի	ա	ի, ա
Ա. Բուն	-	- ք	-	- ք	-	- ք	-	-	- ք	-	- ք
Ա. Բուն	-	- ս	-	- ս	-	- ս	-	-	- ս	-	- ս
Ա. Արմատ	-այ,	-աց	-ոյ,	-ոց	-ի,	-ից	-ու,	-աց	-ոյ,	-աց	-ու,
Ա. Արմատ	-այ,	-աց	-ոյ,	-ոց	-ի,	-ից	-ու,	-աց	-ոյ,	-աց	-ու,
Ա. Արմատ	-աւ,	-ավ	-ով,	-օվ	-իւ,	-իվ	-ուվ,	-աց	-ով,	-աց	-ուվ,

ԾԱՆ. 1. Կէտը (•) նշանակում է արմատից հեռացած բաղաձան գիրը (աղեղ-ա-ք, կայ-ե-ք):

ԾԱՆ. 2. Բացառականը միշտ ունի է կամ չ նախորդը (§ 48, ե):

ԾԱՆ. 3. Հայցականը, եթէ որոշեալ է՝ ակրից առնամ է նախորդը:

§ 56. Օրինակներ ձայնաւոր պարզ հոլովումի:

Ա Հոլովիչ.

Բուն և Արմատ—Տիտան.

Ո. Տիտան Տիտանք

Հ. (գ) Տիտան Տիտանս

Ս. Տիտանայ Տիտանաց

Բ. ի Տիտանայ Տիտանաց

Գ. Տիտանաւ Տիտանաւք.

Ի Հոլովիչ.

Բուն—սիրտ, Արմ.—սրտ.

Ո. սիրտ սիրտք

Հ. (գ) սիրտ սիրտս

Ս. սրտի սրտից

Բ. ի սրտէ սրտից

Գ. սրտիւ սրտիւք.

Ո Հոլովիչ.

Բուն—մարմին, Արմ.—մարմն.

մարմին մարմինք

մարմին մարմինս

մարմնոյ մարմնոց

մարմնոյ մարմնոց

մարմնով մարմնովք.

Ու Հոլովիչ.

Բուն և Արմ.—դաս.

դաս դասք

դաս դասս

դասու դասուց

դասուէ, դասէ դասուց

դասու դասուք.

ԾԱՆ. 1. Ա Հոլովիչով հոլովում են միայն յատուկ անունները:

ԾԱՆ. 2. Ո Հոլովիչով հոլովում են ի միջի այլոց և այն բառերը, որոնք վերջանում են եւ, եւ, ին, ուն, ուր, ուծ ածանցական մասնիկներով. (կան բացառութիւններ):

ԾԱՆ. 3. Ի Հոլովիչով հոլովում են ի միջի այլոց և այն բառերը, որոնք վերջանում են ոյ, է, ոյ, եւն, բառուն, գոյն, ժն, ութ, ութ, շո. (կան բացառութիւններ):

ԾԱՆ. 4. Ու Հոլովիչով ի միջի այլոց հոլովում են և մի քանի բառեր, որոնք վերջանում են ո գրով և նախընթաց բաղաձայնով. Սոքա գիրը ձգում են եզակի թեք հոլովներում, իսկ յոդնակիում (նաև եղակի գործիականում) փոխում են ն-ի և Հոլովում են բաղաձայն հոլովումով. օր. Ո. Հ. փոքք, Ս. փոքու, Բ. ի փոքուէ, Գ. փոքու և փոքուք, յոգն. Ո. փոքուք. Հ. փոքուս, Ս. փոքուց, Բ. ի փոքուց, Գ. փոքուքք:

§ 57. Օրինակներ ձայնաւոր խառն հոլովումի:

Ի, Ա Հոլովիչ.

Բուն—վէմ, Արմ.—վիմ.

Ո. վէմ վէմք

Հ. (գ) վէմ վէմս

Ո, Ա Հոլովիչ.

Բուն և Արմ.—բարի.

բարի բարիք

բարի բարիս

Ա. Տ. վիմի վիմաց բարոյ բարեաց

Բ. ի վիմէ վիմաց բարոյ բարեաց

Գ. վիմաւ վիմաւք բարեաւ բարեաւք.

ԾԱՆ. 1. Ե, ա խառն հոլովումով հոլովում են ի միջի այլոց և այն բառերը, որոնք վերջանում են ա բառուն, (բացի եւն և բառուն), ու, եւ, իւ, ու; որ, ուր, եւ, եցն, ոյ, ուն, էւ, ուն, ու:

ԾԱՆ. 2. Ո, ա ձայնաւոր խառն հոլովումով հոլովում են այն բառերը, որոնք վերջանում են է ձայնաւորով, բացի միավանկ և ուն, որտեղ է հոգի բառերից, որոնք հոլովում են պարզ և հոլովչով, Այն բառերը, որոնք ոչ հոլովին ունին՝ (§ 39,2) բացառականը կազմում են է գրով. օր. տեղի, տեղուց, ի տեղուցէ:

§ 58. Օրինակներ բաղաձայն պարզ հոլովումի:

Ա Հոլովիչ.

Ե Հոլովիչ.

Բուն և արմ.-գեղմն, բուն-սիւն, արմ. սին. բուն և արմ.-կայսր.

Ո. գեղմ-ն գեղմանք սիւն սիւնք կայսր կայսէրք աղեղունք

Հ. (գ) գեղմն գեղմանս սիւն սիւնս կայսր կայսէրս աղեղունս

Ս. գեղման գեղմանց սեան սեանց կայսեր կայսերց

Բ. ի գեղմանէ գեղմանց սենէ սեանց կայսերէ կայսերց

Գ. գեղմամբ գեղմամբք. սեամբ սեամբք. կայսերբ կայսերբք:

ԾԱՆ. 1. Ե հոլովին ունեցող բառերը եզ. գործ. և յոգնակի թեք. հոլովիները կազմում են նոյնպէս՝ կայսերաւ, կայսերաց, կայսերաւք, (ա կրկնակ հոլովիչով, նախկին է հոլովիչն համարելով արմատական):

ԾԱՆ. 2. Կայ մի բառ ուր (օր), որ հոլովում է բաղաձայն հոլովումով, ու հոլովիչով. Ո. Հ. աւր, Ս. աւուր, Բ. յաւրէ (§ 18, փոխանակ յաւուրէ), Գ. աւուրբ. յոգն. աւուրք, աւուրս, աւուրց, աւուրբք: Ա- ձայնը բաղաձայնի առաջ պատահելիս՝ կարող է սղուի օ—աւր=օր, յաւրէ=յօրէ:

§ 59. Օրինակ բաղաձայն խառն հոլովումի:

Ի, Ա Հոլովիչ.

Բուն և Արմատ—մասն.

Ո. մասն մասունք, անձինք

Հ. (գ) մասն մասունս, անձինս

Ս. մասին մասանց

ի մասնէ մասանց
դ. մասամբ մասամբք.
ԾԱՆ. Բացառականը՝ նմանութեամբ բաղաձայն և հոլովումին՝
կարող է լինել և հոլովիչով—ի մասնէ, ի գառնէ.

ԳԼ. Ը. ԶԱՐՏՈՒՂԻ ՀՈԼՈՎՈՒՄ.

§ 60. Կան բառեր, որոնք վերոլիշեալ կանոններին համաձայն չեն հոլովում, այլ բացառութիւններ են կազմում նոցանից: Այս բառերն են՝ այր, հայր, ժայր, ին, գիւղ և նոցանից բարդուած կամ նոցա նման բառերը—քեռայր, տէր (տի-այր). մայր, եղբայր. հօրաքոյր. տիկին. քաղաքագիւղ և այլն: Այսա անկանոնութիւնը կայանում է նորանում, որ կամ երկու հոլովական արմատ ունին, կամ հոլովիչ ձայնաւոր չունին, կամ մասամբ հոլովում են ձայնաւոր և մասամբ բաղաձայն հոլովումով: Այսպիսի հոլովումը կոչւում է շարուած (ուղիղ հոլովումից շեղուած):

§ 61. Այս: Բուն՝ այր, ար. արմատ՝ արն:

Ո. այր¹⁾ արք
Հ. (զ) այր արս
Ա. Տ. առն²⁾ արանց
Ի. յառնէ յարանց
Դ. արամբ արամբք:

§ 62. Հայր: Բուն՝ հայր, հար. արմ. հար, հարն:

Ո. հայր¹⁾ հարք
Հ. (զ) հայր հարս
Ա. Տ. հաւը հարց, հարանց
Ի. ի հաւըէ ի հարց, ի հարանց
Դ. հարբ, հարամբ հարբք, հարամբք:

§ 63. Քայր: Բուն՝ ժայր, ժար. արմատ՝ ժէր, ժեռ:

¹⁾ Տես 28.

²⁾ Տես 29, բ.:

Ո. քոյր¹⁾ քորք
Հ. (զ) քոյր քորս
Ա. Տ. քեռ քերց
Ի. ի քեռէ ի քերց
Դ. քերը քերքք:

ԾԱՆ. Քոյր բառը ունի և ուրիշ, թէև ոչ այնչափ ընտիր հոլովում բաղաձայն է հոլովիչով, քուր արմատից. Եղ. Ա. քուեր, Գ. քուերբ. յոդն. Ա. Տ. Բ. քուերց, Գ. քուերբք:

§ 64. Կին: Բուն՝ ին. արմատ՝ ին, իտն:

Ո. կին կանայք¹⁾
Հ. (զ) կին կանայս
Ա. Տ. կնոջ²⁾ կանանց
Ի. ի կնոջէ ի կանանց
Դ. կնաւ, կանամբ կանամբք:

§ 65. Գիւղ (գւաւշ, գեօշ, գեւշ): Բուն՝ գիւղ, գւաւշ, գեւշ:
արմատ՝ գեշ, գիւշ:

Ո. գիւղ, գեաւղ, գեւղ գիւղք, գեաւղք
Հ. (զ) գիւղ, գեաւղ, գեւղ գիւղս, գեաւղս
Ա. Տ. գեղջ գիւղից
Ի. ի գեղջէ ի գիւղից
Դ. գեղիւ, գիւղիւ գիւղիւք:

§ 66. Կան շատ բառեր, որոնք երկու տեսակ են հոլովում և կոչւում են իրեն-հոլով սոքա զործածում են
ա) տարբեր հոլովիչներ. օր. թուղթ—թղթոյ, թղթով և թղթէ թղթիւ, մոգ—մոգու, մոգուց և մոգի, մոգաց.
բ) տարբեր հոլովական արմատներ. օր. խորհուրդ—խորհուրդոյ, խորհուրդով և խորհուրդուն—խորհուրդումբ. (բուն՝ խորհուրդ և * խորհուրդիւն, արմատ՝ խորհուրդ և խորհուրդին). մահ—մահու, մահք, մահուց և մահուան, մահուամբ, մահունք,

¹⁾ Տես 28.

²⁾ Տես 39, ծան. 2:

մահուանց. (բուն՝ մահ և * մահուն). քար—քարի, քարիւ և քարինք—քարանց, քարմբք. (բուն՝ քար և * քարն—տ. 42, ծան.), տիւ—տուի—տոււվ և տունջեան, տունջեամբ. (բուն՝ տիւ և * տունջիւն, արմատ' տու և տունջին):

§ 67. Կրկնահոլովներից տարբերելու է նախայաց բառերը, այսինքն այն բառերը, որոնք տարբեր նշանակութիւն և տարբեր հոլովումներ ունին, բայց նոցա բուները գրաբարում պատահաբար նման են միմեանց ¹⁾:

Այս բառերն են.

այր, այրի, այրիւ —^{այրանչաւ} և այր, առն, արամբ—^{այրանչաւ} այրուականա
հայր, հայրի, հայրիւ—^{հայրանչաւ} և հայր, հաւր, հարբ—^{հայր} օռեց

կըրուած գըր, մայր, մայրիւ—^{մայրէ} ծռու և մայր, մաւր, մարբ—^{մայր} մայրէ
գայլ, գայլի, գայլիւ—^{բայրանչաւ} և գայլ, գայլոց, գայլով—^{բայրանչաւ} բայրանչ
դիւնաց կոյս, կուսի, կուսիւ—^{կոյսէ} և կոյս, կուսի, *կուսաւ, կուսաց—^{կոյսէ} շիշ
սան, սանի, սանիւ—^{սանէ} և սան, սանու, սանուց—^{սանէ}, սանէ
փող, փողի, փողիւ—^{փողէ} և փող, փողոց, փողով—^{փողէ} հնչւռու փող
օդ, օդի, օդիւ—^{օդէ} և օդ, օդոց, օդով—^{օդէ} հօջցութէ
որթ, որթոց, որթով—^{որթէ} և որթ, որթու, որթուց—^{որթէ} ուռաւո
դիւնաց դիւնաց, դիւնացի, դիւնացիւ և դիւնաց, դիւնաց կամ դիւնաց, դիւնաց (յոդն.)—^{դօնաց}

Գլ. Թ. ԴԵՐԱՆՈՒԽԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ.

§ 68. Դերանուխական հոլովումը հետևեալ տարբերութիւններն ունի անուանական հոլովումից.

ա) Գործածում է սեռականում և տրականում հոլովակերտ գրեր:

¹⁾ Հայերէն ամենահին լեզուում այս բառերից շատերը տարբեր պէտք է եղած լինին ձեռով. այսպէս հու բառը գրաբարում նշանակում է 1) սկիզբ—մեծ հայր և 2) թռչուն—ընտանի հաւ և աքաղալ. մինչդեռ գրաբարից առաջ այդ բառը երեւ տարբեր վերջաւորութիւններ սիստ ունենար, ինչպէս տեսնում ենք լատիներէնի մէջ, ուր անս նշանակում է մեծ հայր, իսկ անս նշանակում է թռչուն. իսկ հայերէնում սև այս վերջաւորութիւններն ընկնելով այդ երկու բառը միևնույն ձեւն են ստացել (աւ—հաւ).

- բ) Բառը հոլովում է մէջտեղից և ոչ վերջից:
գ) Բառը ունենում է մի քանի հոլովական արմատներ:
դ) Գործիական և բացառական հոլովներում ստանում է կրկնական գործիականացուցիչ և կրկնականացուցիչներ:
ե) Հոլովիչ ձախաւորը երբեմն գործածում է և երբեմն ոչ (սղուելով):

Այս հոլովումով հոլովում են դերանուխների մեծ մասը. իսկ փոքր մասն հոլովում է անուանական հոլովումով, կամ դերանուխական և անուանական խառն հոլովումներով:

§ 69. Եզակիում սեռականի հոլովակերտն է բ. տրականի հոլովակերտը՝ Տ: Բացառականը կազմուում է տրականից, աւելացնելով է, նէ, էն: Յոդնակիում այս հոլովակերտ տարբերը չկան, և յոդնակին աւելի նման է անուանական հոլովումին: Հայցական հոլովը, թէ եզակիում և թէ յոդնակիում, միշտ ունենում է որ որոշիչ տառը. բայց երբ հայցական հոլովը գործ է ածում է, առաջ, լուր, լուս նախդիրներով շտառը ձգում է (տ. § 125):

§ 70. Անորոշ դերանուխները ունին շնչաւոր առարկաի համար Ո արմատը, իսկ անշունչի համար Ի արմատը, որոց վերայ աւելանալով այլ և այլ ածանցներ՝ կազմում են հետեւալ անորոշ դերանուխները.

շնչաւոր	անշունչ
ո, ո-վ, ո-ր, ո-մն, ո-ք.	ի, ի-ր, ի-մն, *ի-ք, ինչ.

§ 71. Ո և նորա երկարը ոչ հոլովում են այսպէս.

ո,	ով	ոյք, ովք
----	----	----------

չ.	զո, զով	զոյս
----	---------	------

Ա.	ոյր	{	ոյց
----	-----	---	-----

Ը.	ում	{	ոյց
----	-----	---	-----

Բ.	յումէ, յումմէ	{	յոյց
----	---------------	---	------

Գ.	—	—	—
----	---	---	---

§ 72. Որ յարաբերականը հոլովում է անուանական հոլովումով, ո հոլովիչով. միայն եզ. Տ. ունի որում, Բ. յորմէ (18):

§ 73. Ահ, ու հոլովում են այսպէս.

Ո. ո-մ-ն ոմ-ա-ն-ք ո-ք

Հ. զոմն զոմ-ա-ն-ս զոք

Ս. ու-րու-մն { ոմ-ա-ն-ց ու-րու-ք

Տ. ու-մե-մն { ոմ-ա-ն-ց ու-մե-ք

Բ. յու-մե-մն-է յոմ-ա-ն-ց յու-մե-ք-է

Գ. ոմ-ա-մ-ք ոմ-ա-մ-ք-ք —

Յոդնակի

ԾԱՆ. Այս արմատներից մնացած կան և հին նախնական հոլով-ներ, որոնք այժմ գործածում են ինչպէս մակբայ. չ. ուր, Բ. ուստ, ուստի (արմատ ո), Հ. ուրեք, Բ. ուստեք, ուստեքէ (արմատ ոք).

§ 74. Ի պակասաւոր հոլովում ունի. եզ. Ուղի փոխա-րէն գործ է ածում չայց.

Ո. չ. զի, Ս. էր, Տ. հիմ, Բ. առ իմէ, Գ. իւ: Յոդնակի չունի:

§ 75. Իր գոյական անուան նշանակութիւն է ստացել (ինչ որ բան, բան, ստացուածք) և հոլովում է անուանական Ա. խառն հոլովումով:

§ 76. Իհ, իւ.

Ո. չ. ի-մն ի-ք

Ս. *ի-րի-մն ի-րի-ք

Տ. ի-մե-մն ի-մի-ք

Բ. իի-մե-մն-է իի-մե-ք-է

Գ. — ի-ւի-ք

Յոդնակի չունին:

§ 77. Ինչ ունի միայն եզ. ուղղ. և հայց. ինչ, զինչ, իինչ:

§ 78. Էակն (գոյական) գերանուններին են էն, դրա, ինքն, իւր, որոնցից ինչն հոլովում է անուանական բաղաձայն հոլո-վումով և հոլովիչով: Առաջին դէմքն ունի երեք հոլովական արմատ—եզ. ես, իմ, յոդն. մ: Երկրորդ դէմքն ևս ունի երեք արմատ—ուղղականում դու, եղակի միւս հոլովներում ք, յոդ-նակի միւս հոլովներում ձ:

Ո. ես դու մեք դուք

Հ. զիս զքեղ զմեզ զձեզ

Ս. իմ քո մեր ձեր

Տ. ինձ քեզ մեզ ձեզ

Բ. լինէն ի քէն ի մէնջ ի ձէնջ

Գ. ինեւ քեւ մեւք ձեւք

ԾԱՆ. Բացառականի նախկին ձեւերը ինձէն, քեզէն, մեզէն, ձեզէն՝ զրաբարում գործ են ածում ինչպէս մակբայ:

§ 79. Ի-ր պակասաւոր հոլովում ունի.

Ո. չ. — իւրեանք, զիւրեանս

Ս. Տ. իւր իւրեանց

Բ. լիւրմէ լիւրեանց

Գ. լիւրեաւ, լիւրեամբ լիւրեամբք:

§ 80. Յու-յակն (գոյական) գերանունները առ, դր, նո եզ. Գործ-ում երկու գործիականակերտ ունին և յոդն. Գործ-ում՝ երկու յոդնականացուցիչ:

Երեքն էլ միատեսակ հոլովում ունին.

Ո. ս-ա ս-ոք-ա

Հ. զս-ա զս-ոս-ա

Ս. ս-որ-ա

Տ. ս-մ-ա ս-ոց-ա

Բ. ի ս-մ-ա-նէ ի ս-ոց-ա-նէ

Գ. ս-ով-ա-ւ ս-ոք-ա-ւ-ք

§ 81. Յուցական ածական գերանուններն են 1) այս, այդ, այն, 2) *այսիչ, *այդիչ, *այնիչ, 3) որյն, դրյն, նոյն, որոնք կազ-մուած են ս, դ, ն, արմատներից և համապատասխան ածան-ցական մասնիկներից: Այսիկ, այդիկ, այնիկ ձեւերը եզ. Ուղղ. և չայց-ում գործածուած չկան զրաբարում, բայց կան աշ-խարհաբարի գաւառական բարբառներում—ասիկ, ասիկայ, էսիկ և այն: Սոյն, դոյն նոյն կազմուած են սո-ին, դո-ին, նո-ին ձեւերից, ձայնաւորների սղումով (27, գ.)

Եզ. Ո. այս *այս-իկ սո-յն (սո-ին)

Հ. զայս *զայս-իկ զսո-յն

Ս. այս-ը այս-օր-իկ սո-ը-ին

Տ. այս-մ այս-մ-իկ ս-մ-ին

Բ.	յայս-մ-անէ, յայսմ	—	—
Գ.	այս-ու	այս-ու-իկ	սո-վ-ին, սո-վ-իմ-ք
Ցոգ.	Ա.	այս-ք	այս-ոք-իկ
Հ.	զայս-ս	զայս-ոս-իկ	սո-ք-ին
Ա.Տ.	այս-ց	այս-ոց-իկ	սո-ց-ին
Բ.	յայս-ց	յայս-ոց-իկ	ի սո-ց-ին, ի սոցունց
Գ.	—	այս-ոք-իւք,	սո-ք-իմբ-ք, սո-վ-
			[իմ-ք-ք:

ԾԱՆ. 1. Առ-վէ-ք երկու գործիականացուցիչ ունի: Այսուհետ՝ փոխանակ այսոքիւէ: (Նմանութեամբ անուանական է հոլովումի ցողն՝ գործիականին): Առ-վէ-ք երկու յօդնականացուցիչ ունի, առ-վէ-ք երկու գործիականացուցիչ, և կազմուել են անուանական բաղաձայն հոլովումով:

ԾԱՆ. 2. Այս գերանունների մի քանի նախնական հոլովական ձեւը գործածում են գրաբարում ինչպէս մակրաց. օր. այսր, այդր, աստր, անդր (նոր հարցմունքի պատասխան, հայցականի մտքով). այսրէն, այդրէն, անդրէն. աստէն, անդէն (ուստի և ուր հարցմունքների պատասխան, բացառականի և հայցականի մտքով). աստի, այտի փոխանակ ադտի – § 28) անտի, աստուստ, այդուստ, անդուստ (ուստի հարցմունքի պատասխան, բացառականի մտքով) և այն:

§ 82. Ստացական (ածական) գերանուններն են իմ, ժողով, լուր, լուր, լուր, առրտ, դրսա, նորա, որոնք կազմում են համապատասխան էական գերանունների սեռականներից: Սոքա հոլովում են անուանական հոլովումով, և հոլովիչով. միայն եղ. §. և Բ. հոլովներում ունին ում և Ք. գերանունական վերջաւորութիւնները – իմում, ձերում, ի քում-է, ի ձերմէ:

Եղ.

յոդն.

Ա. իմ	քո	իմ-ք	քոյ-ք
Հ. զիմ	զքո	զիմ-ս	զքոյ-ս
Ա. իմ-ոյ	քոյ-ոյ, քոյ	իմ-ոց	քոյ-ոց
Տ. իմ-ում	քոյ-ում, քում	»	»
Բ. իմ-մէ	ի քում-մէ	իմ-ոց	ի քոյ-ոց
Գ. իմ-ով	քոյ-ով, քով	իմ-ովք	քոյ-ովք, քովք:

ԾԱՆ. 1. Իմ-ի նման հոլովում են մեր, ձեր, իւր և միւսները. միայն սորա, սոցա... ձեւերը եղ. Բաց-ում անուանական հոլովումի վերջաւորութիւն ունին – ի սորա-յ-ոյ, ի սոցա-յ-ոյ (համեմատել § 27 ա):

ԾԱՆ. 2. Նոյն արմատներից ածանցականներով կազմում են և հետևեալ ձեւերը – իմային, մերային ձերային, իւրային (իմայնոյ, մերայնով), իմոյին, քոյին, մերոյին (անհոլով), իմովին, քովին, իւրովին, իւրովի (մակբայ):

Գ. ԽՈՆԱՐՀՈՒՄ

ԳԼ. Փ. ԲԱՅԻ ԶԵՒԵՐ.

§ 83. Բայերն ունին երեք սեռ, ներդրական, որ ցոյց է տալիս, թէ գործողութիւնը անցնում է ուրիշ առարկայի վերայ. օր. աւետանի զմարդկիս, հայր սիրէ զիս. իրաւուրական, որ ցոյց է տալիս, թէ գործողութիւնը ուրիշ առարկայից անցնում է ենթակայի վերայ. օր. աւետանի ի մարդկանէ, որդի սիրէ ի հօրէ, և շնորհական, որի գործողութիւնը չէ փոխադրում ուրիշի վերայ, և ոչ ուրիշից ենթակայի վերայ. օր. նստիմ, ելանեմ:

ԾԱՆ. Այն բայերը, որոնք միևնոյն ձևով ունին թէ ներգործականի և թէ կրասրականի նշանակութիւն՝ կոչում են հաստրէ. օր. տարէ, բարեցոյ զքեզ և բարեց, բարեցոյ ի քէն:

§ 84. Բայերն ունին չորս եղանակ. առհանուկան, որ պատմում կամ բացասում է գործողութիւնը, օր. նստիմ, գործեցի, ոչ նստաց, ոչ գործէի. առարտառական, որ գործողութիւնը պահմանի կամ թէութեան տակ է ձգում, ցոյց տալով նորա կախումը ուրիշ գործողութիւնից. օր. ոչ հաւատացեն, եթէ ի մեռելոց ոք յառնից. յորժամ գայցէն՝ լիշեա զիս. հրամայական, որ հրամայում կամ յորդորում է. օր. արէ՛, կո՛յ, մանուկ գու. եկա՛յ առ լս. արգելուկան, որ արգելում է. օր. մ' աղանոներ, մ' գոշանար:

§ 85. Բայերն ունին երեք ժամանակ. ներէայ, որ ցոյց է տալիս ներկայումս կատարուող (շարունակուող) գործողութիւն.

օր. իսուկի, գնամ. անցեալ, որ ցոյց է տալիս, թէ զործողութիւնն առաջ է կատարուել. օր. իսուկի, գնայի, իսուցալ էմ. աղասանի, որ ցոյց է տալիս, թէ զործողութիւնը յետոյ պիտի կատարուի. օր. իսուցայց, գնայի, անցուելոց էմ:

ԾԱՆ. 1. Անցեալ ժամանակը կոչւում է անհոգութիւնը շարունակւում էր և չէր վերջացել (լսուէի, տեսանէի). հոգութեալ եթէ զործողութիւնը հէնց նոր է վերջացել (լսուցայ, տեսի). յուրաքանչեալ եթէ զործութիւնը ուրիշ ներկաց զործողութիւնից առաջ վերջացել է (տեսեալ է, գնացեալ է). Երբ զործողութիւնը ուրիշ անցեալ գործողութիւնից առաջ վերջացել է (տեսեալ էր, գնացեալ էր).

ԾԱՆ. 2. Ապառնին երկու տեսակ է, պար, որ ցոյց է տալիս, թէ զործողութիւնը յետոյ պիտի կատարուի (տեսից, լսուցաց—կտեսնեմ, կխօսիմ), և բարերեալ, որ հաստատում և պնդում է, թէ զործողութիւնն անշուշտ պիտի կատարուի (տեսանելոց եմ, գալոց է—պիտի տեսնեմ, պիտի դայ):

§ 86. Բայերն ունին չը՞ գերբայ. անորոշ գերբայ, որ զործողութեան անունն է (զործել, տեսանել), աւրիայ գերբայ (զործող, տեսանող), անցեալ գերբայ (զործեալ, տեսեալ) և աղասանի գերբայ (զործելոց, տեսանելոց):

§ 87. Բայերն ունին երկու թիւ—եղանին և յուգանին, և երես գէմք—ապացին, երիրորդ և երրորդ:

§ 88. Բայերի վերջաւորութեան փոփոխութիւնը, որով կազմւում են ժամանակներ, եղանակներ, թուեր և գէմքեր՝ կոչւում է խոնարհուած: Բայերը երկու տեսակ խոնարհուում ունին—աւրիգութանիւբոց և իրաւուրանիւբոց:

§ 89. Բայերի անորոշ գերբայի վերջաւորութիւնները կոչւում են չժորդանէր, որոնք չորս են ալ, եւ իւ, ու. իսկ բայերը նոյն վերջաւորութիւններով կոչւում են չժորդութիւննէր, որոնք նոյնպէս չորս տեսակ են լինում. ապացին լծորդութիւն—աղալ, երիրորդ լծորդութիւն—զործել, երրորդ լծորդութիւն—նստիլ, չորրորդ լծորդութիւն—թողուլ:

§ 90. Ժամանակների և եղանակների նկատմամբ բայերն ունին հետևեալ ձևերը.

Սահմանական եղանակի 1) ներկայ, 2) անցեալ անկատար,

3) անցեալ կատարեալ, 4) անցեալ յարակատար, 5) անցեալ գերակատար, 6) պարզ ապառնի, 7) բաղադրեալ ապառնի, Սահմանական եղանակի 8) ապառնի, 9) անցեալ, 10) Հրահայական եղանակ (կատարեալ), 11) Արգելուկան եղանակ (ներկայ), Գերբայանը 12) անորոշ, 13) ներկայ, 14) անցեալ, 15) ապառնի:

ԾԱՆ. Այն բայերը, որոնք չունին այս ձևերից մի քանիսը՝ կոչւում են պատճենը:

§ 91. Սահմանականի ներկան, անցեալ անկատարը, կատարեալը, պարզ ապառնին, ստորագասականի ապառնին, հրամայականը, արգելականը և գերբայները վերջաւորութիւններն աւելացնում են անմիջապէս բայի արմատին վերայ և կոչւում են Գլխուրը ձևեր. իսկ սահմանականի յարակատարը, գերակատարը, բաղադրեալ ապառնին և ստորագասականի անցեալը կտզմւում են զերբայներով և օժանդակ էական բայով (էՅ) և կոչւում են Երիգրութանի ձևեր:

ԿԼ. ՓԱ. ՍԹԱԶԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՄԱՏ.

§ 92. Բոլոր գլխաւոր ձևերը կազմւում են երկու արմատից, որոնք կոչւում են Ապացին արմատ և Երիրորդ արմատ: Ապացին արմատը գտնուում է՝ եթէ բայի սկզբնական ձևից, այսինքն անորոշ գերբայից վերցնենք լծորդները. օր. աղալ—Ա. արմ. աղ, ընթանալ—Ա. արմ. ընթան, սիրել—Ա. արմ. սիր, հատանել—Ա. արմ. հատան, նստիլ—Ա. արմ. նստ, ծնանիլ—Ա. արմ. ծնան, հանգիլ—Ա. արմ. հանգչ, թողուլ—Ա. արմ. թող, ընկենուլ—Ա. արմ. ընկեն:

§ 93. Առաջին արմատը լինում է պարզ, ինչպէս աղ, սիր, նստ, թող. լինում է և բարերեալ երբ բուն բայերմատից յետոյ աւելացած են բաղադրական մասնիկներ, ինչպէս ընթան, հատան, ծնան, հանգչ, ընկեն: Բաղադրական մասնիկներն են ն, ան, էն, չ, նչ. օր. առանուլ, տեսանել, ընկենուլ, թագչիլ, երկանչիլ:

ԾԱՆ. Կան երկու բայ ևս, որոնք ունին ալ, ան բաղադրական մասնիկներ—ճանանչել, մեղանչել:

§ 94. Առաջին արմատին վերայ աւելանալով համապատասխան մասնիկներ և վերջաւորութիւններ՝ կազմւում են առհ. ներկան, անցեալ անհատարը, սպորտ. սպոտ-նին, արգելականը, անորոշ և ապառանի դերբաները:

§ 95. Երկրորդ արմատը լինում է պարզ՝ երբ բայարմատին վերայ անմիջապէս դրւում են վերջաւորութիւնները. օր. տես-ի, ծն-այ, թող-ի, ուս-այ. լինում է և բայարմատին վերջաւորութեան մէջ մտնում են այ, էյ, և բաղադրական մասնիկները. օր. աղ-այ-ի, խօս-էց-այ, երկ-ի-այ (երկեալ):

§ 96. Երկրորդ արմատը կազմւում է Առաջին արմատից հետևեալ կերպով.

ա) Եթէ Ա. արմատը պարզ է՝ այդ արմատի վերայ աւելանում է առաջին լծորդութեան մէջ այ, իսկ երկրորդ և երրորդ լծորդութեան մէջ էց բաղադրական մասնիկը, օր. Ա. արմ. աղ(ալ), Բ. արմ. աղ-աց, Ա. արմ. սիր(ել), Բ. արմ. սիր-եց, Ա. արմ. դատ(ել), Բ. արմ. դատ-եց: Այ, էց մասնիկները կոչւում են զարդ բաղադրիչ, իսկ նոցանով կազմուած Բ. արմատները կոչւում են զարդ բայարմատին արմատներ:

Բայարմատներն կազմում են գիտել, ասել, կարել, մարթել բայերը, որոց Բ. արմատներն են գիտ-այ, աս-այ, կար-այ, մարթ-այ (փոխանակ գիտ-եց, աս-եց, կար-եց, մարթ-եց):

բ) Եթէ Ա. արմատը բաղադրուած է չ, աչ մասնիկներով Բ. արմատում այդ մասնիկները փոխւում են ի զրին, որ ո ձայնաւորի առաջ հանդիպելիս կազմում է նորա հետ երկրարբառ ւա (27, դ). օր. Ա. արմ. թագ-է-(իլ), Բ. արմ. թագ-ի, Ա. արմ. երկ-նչ-(իլ), Բ. արմ. երկ-ի: Այս ի մասնիկը կոչւում է լոյլ բաղադրիչ, և նորանով կազմուած Բ. արմատները կոչւում են լոյլ բայարմատին արմատներ:

ԴԱՅ. Նոյնպէս ի թոյլ բաղադրիչ ունին Դ. լծորդութեան միքանի բայեր, որոնք Ա. արմատում ունին բաղադրիչը. օր. ցան-ուլ- Բ. արմ. ցան-ի, քաղց-ուլ—Բ. արմ. քաղց-ի :

Բայարմատներն կազմում է մեղ-անչ-ել բայլ, որ ի բաղադրիչը չէ ընդունում:

գ) Եթէ Ա. արմատը բաղադրուած է ն, ան մասնիկներով Բ. արմատը գտնուում է՝ դուքս ձգելով այդ մասնիկները. օր. Ա. արմ. հատ-ան-ել, Բ. արմ. հատ, Ա. արմ. ծն-ան-իլ, Բ. արմ. ծն:

ԴԱՅ. 1. Ա. լծորդութեան մէջ եթէ Ա. արմատը բաղադրեալ է Բ. արմատն ևս բաղադրեալ է լինում այ մասնիկով. օր. ընթ-ան-ալ, Բ. արմ. ընթ-աց, զօր-ան-ալ, Բ. արմ. զօր-աց:

ԴԱՅ. 2. Բ. լծորդութեան մէջ Ա. արմատը թէ պարզ լինի, թէ բաղադրեալ Բ. արմատը պարզ է լինում. օր. Ա. պարզ արմ. թող-ուլ, Բ. պարզ արմ. թող, Ա. պարզ արմ. հեղ-ուլ, Բ. պարզ արմ. հեղ, Ա. բաղադր. արմ. առ-ու-ուլ, Բ. պարզ արմ. զբօս:

Բայարմատներն են կազմում յե-ա-ռ-ա-ռ-լ, ընկ-ե-ն-ռ-ա-ռ-լ, զգ-ե-ն-ռ-ա-ռ-լ շ-ն-ռ-ա-ռ-լ, ի-ն-ռ-ա-ռ-լ բայերը, որոց Բ. արմատներն են՝ յեց, ընկեց, զգեց, լց, ից, և գոշց-ն-ռ-ա-ռ-լ զարթ-ե-ն-ռ-ա-ռ-լ, հած-ե-ն-ռ-ա-ռ-լ, ոշ-ե-ն-ռ-ա-ռ-լ շած-ե-ն-ռ-ա-ռ-լ և այլ բայերը, որոց Բ. արմատը լինում է գոշցի, հածէ, ոշէ, շածէ (§ 96, բ. ծան.):

§ 97. Երկրորդ արմատին վերայ աւելանալով համապատասխան մասնիկներ և վերջաւորութիւններ՝ կազմւում են անշետ կապարեալը, պարզ սպոտանին, հրամայականը, ներկայ և անցեալ դերբաները:

ԳԼ. ԺԲ. ԶԵԽԵԲԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԲ.

Ա) ԱՓԵՃԻՆ ԱՐՄԱՏ.

§ 98. Ներգործակերպ և կրաւորակերպ խոնարհումները տարբեր վերջաւորութիւններ ունին Բ. արմատից կազմուած ձևերում (97). իսկ Ա. արմատից կազմուած ձևերում (94) վերջաւորութիւնները նոյն են թէ ներգործակերպ և թէ կրաւորակերպ խոնարհումի մէջ. միայն այլ լծորդութիւնը ստորագասականում ունի տարբեր վերջաւորութիւններ: իսկ եւ լծորդութեան բայերը կրաւորականի նշանակութիւն ստորագասականում են Գ. լծորդութեան (իլ) և խոնարհում իրեւ Գ. լծորդութեան բայլ: Որ. դատ-ի նշանակում է թէ դատում եմ և

թէ դատւում եմ, հատանէի նշանակում է թէ կտրում էի և
թէ կտրում էի:

§ 99. Առաջին արմատից կազմուած ձևերը վերջաւորու-
թիւնները միացնում են արմատի հետ յօդով, որ լրաքանչիւր-
բայի լծորդի ձայնաւորն է, ենթարկուած մի քանի փոփոխու-
թիւնների. օր. գործ-է-մ, աղ-ա-ս, թող-ու-մք, գործ-է-ի (փո-
խանակ գործ-է-ի, 27, զ), թող-ոյ-ը (փխնկ. թող-ու-ը, § 28)
և այն: Իսկ Բ. արմատից կազմուած ձևերը յօդ չունին,
այլ վերջաւորութիւններն ուղղակի աւելացնում են արմատին
վերայ, օր. գործեց-ի, թող-եր, աղաց-ից և այն:

§ 100. Սահմ. աերէայ վերջաւորութիւններն են
հ, ա, —, ն, չ, ա, իսկ յօդով հանդերձ
Ա. լծ. ամ, աս, այ¹), ամն, այն¹), ան.
Բ. լծ. էմ, էս, է¹), էմն, էն¹), էն.
Գ. լծ. իմ, իս, ի, իմն, ին, ին.
Դ. լծ. ռամ, ռաս, ռա²), ռամն, ռա²), ռան: Օր.
Ա. լծ. աղ-ամ, -աս, -այ, -ամք, -աւք, -ան.
Բ. լծ. գործ-եմ, -ես, -է, -եմք, -էք -են.
Գ. լծ. դատ-իմ, -իս, -ի, -իմք, -իք, -ին.
Դ. լծ. թող-ում, -ուս, -ու, -ումք, -ուք, -ուն:

§ 101. Սահմ. անյեալ անհապարհ վերջաւորութիւններն են
է, էր, ը, ար, էն, իսկ յօդով
հանդերձ
Ա. լծ. այն³), այեր, այս, այսէ, այնէ, այնն.
Բ. և Գ. լծ. էն⁴), էր, էր, էսէ, էնէ, էնն.
Դ. լծ. ռան, ռայեր, ռայ⁵), ռասէ, ռանէ, ռանն: Օր.

¹⁾ Տես § 28:

²⁾ Հին ձեռագիրների մէջ պատահում են նախլին ձևերը ոյ
ոյք, որոնք առաջ են եկել ձայնի աճումից համաձայն § 28:

³⁾ Տես § 27, Բ:

⁴⁾ Տես § 27, Գ:

⁵⁾ Տես §§ 21 և 25:

Ա. լծ. աղ-ալի, -ալիր, -ալր, -ալաք, -ալիք, -ալին.
Բ. լծ. գործ-էի, -էիր, -էր, -էաք, -էիք, -էին.
Գ. լծ. դատ-էի, -էիր, -էր, -էաք, -էիք, -էին.
Դ. լծ. թող-ուի, -ուիր, -ուր, -ուաք, -ուիք, -ուին:

ԾԱՆ. Հին ձեռագիրների մէջ պատահում է Բ. լծորդութեան
սկզբնական լծորդը է, օր. գործի, տեսանէիր, տեսանէիք և այն:
Ա. լծ. թող-ուի, -ուիր, -ուր, -ուաք, -ուիք, -ուին:

§ 102. Սահմարտասահման ունի ից մասնիկը, որ արմատին
հետ միանալիս՝ Բ. և Գ. լծորդութեան բայերը դուրս են ձը-
գում յօդը, իսկ Գ. լծորդութեան մէջ ընդհակառակն յօդը
մնալով դուրս է ձգում ից մասնիկի է ձայնաւորը: Ա. լծ. մէջ
յօդը միանալով ից մասնիկի հետ՝ տալիս է երկբարբառ այ
(ա+ից=այց—տես § 27, ա): Ստորագասականի վերջաւորու-
թիւնները նոյնն են, ինչ որ սահմ. ներկայինը. միայն
Ա. լծորդութիւնն ստանում է Բ. լծորդութեան վերջաւորու-
թիւնները.

Ա. լծ. այց-էմ, այց-էս, այց-է, այց-էմն, այց-էն, այց-էն.
Բ. լծ. ից-էմ, ից-էս, ից-է, ից-էմն, ից-էն, ից-էն.
Գ. լծ. ից-իմ, ից-իս, ից-ի, ից-իմն, ից-ին, ից-ին.
Դ. լծ. ռայ-ռամ, ռայ-ռաս, ռայ-ռա, ռայ-ռամն, ռայ-ռան, ռայ-ռան: Օր.

Ա. լծ. աղ-այցեմ, -այցես, -այցէ, -այցեմք, -այցէք, -այցեն.
Բ. լծ. գործ-իցեմ, -իցես, -իցէ, -իցեմք, -իցէք, -իցեն.
Գ. լծ. դատ-իցիմ, -իցիս, -իցի, -իցիմք, -իցիք, -իցին.
Դ. լծ. թող-ուցում, -ուցուս, -ուցու, -ուցումք, -ուցուք, -ուցուն:

ԾԱՆ. Գ. լծ. վերջաւորութիւնը յատուկ է կրաւորակերպ խո-
նարհումին: Եթէ Ա. և Բ. լծորդութեան բայերը կրաւորականի նշա-
նակութիւն ստանան՝ ստորագասականում առնում են Գ. լծ. վերջա-
ւորութիւնները. օր. աղացց-էմ, (աղացուիմ), գործից-էս (գործուիս):
Տես § 98:

§ 103. Արգելականի ներկան (միայն երկրորդ գէմքում) կազ-
մում է սահմ. ներկայի Բ դէմքից, եղակիում փոխելով « գիրը
ը-ի, իսկ յոդնակիում անփոփոխ պահելով սահմ. ներկայի վեր-
ջաւորութիւնը. սկզբից ունի ն' արգելական մակբայը. օր.

- Ա. լծ. մի աղա-ը, մի աղավք.
Բ. լծ. մի գործե-ը, մի գործէք.
Գ. լծ. մի դատի-ը, մի դատիք.
Դ. լծ. մի թողու-ը, մի թողուք:

§ 104. Անոյրշ ռեբբայլ բայի սկզբնական ձևն է, կազմուած Ա. արմատից և լծորդներից, աղաւ, ընթանալ, գործել, հատան-էլ, դատիլ, ուսանիլ, թողուալ, առնան-ուալ: Անորոշ գերբայր հոլովում է և հոլովիչով, միայն եղակի: Հոլովուելու ժամանակ Գ. լծորդութեան է գիրը թեք հոլովներում փոխում է է-ի. օր. նստիլ Ա. նստելոյ, Գ. նստելով:

ԾԱՆ. Ջատ հասարակ և չէրբական բայեր, որոնք խոնարհուում են Գ. լծորդութեամբ՝ անորոշ գերբայրում ունին Բ. լծորդը. օր. լինէլ-լին-էլ, դատի-դատէլ, ծնանին-ծնան-էլ:

§ 105. Ապառնի գերբայի վերջաւորութիւնն է չա, որ միանում է Ա. արմատին հետ յօդով, բացի Գ. լծորդութիւնից որ միանում է առանց յօդի, (Համեմատել § 18): Գ. լծորդութեան յօդը այստեղ փոխում է է-ի. օր.

- Ա. լծ. աղա-լոց, Բ. լծ. գործ-ե-լոց,
Գ. լծ. դատ-է-լոց, Դ. լծ. թող-լոց:

Բ) ԵՐԿՐՈՐԴ ԱՐՄԱՏ:

§ 106. Երկրորդ արմատից կազմուած ձևերը (97) բացի անցեալ գերբայից՝ տաղբեր վերջաւորութիւններ ունին ներգործակերպ և կրաւորակերպ խոնարհումի համար. ինչպէս՝ ներգ. տես-ի, գործեց-ի, տես-չա, գործեց-չա, կրաւ. տես-այ, գործեց-այ, տես-այց, գործեց-այց: Արոշելու համար, թէ որ խոնարհումը պէտք է ունենալ բայը Բ. արմատից կազմուած ձեւերում՝ պէտք է ի նկատի ունենալ հետեւեալ կանոնները.

ա) Ա և Պ. լծորդութիւնների մէջ եթէ առաջին արմատը պարզ է՝ երկրորդ արմատը կարող է ունենալ թէ ներգործակերպ և թէ կրաւորակերպ խոնարհում նայելով իմաստին. օր. ներգ. կարդայ զնա, թողուալ զնա (կանչում եմ, թողնում եմ նրան)՝ կարդացի զնա, թողի զնա (կանչեցի, թողի նրան),

կրաւ. կարդայ ի նմանէ, թողուալ ի նմանէ (կանչում եմ, թողնուում եմ նորանից)՝ կարդացայ, թողուալ ի նմանէ (կանչուեցայ, թողուեցայ նորանից):

բ) Ա. լծորդութեան մէջ եթէ Առաջին արմատը բաղադրեալ է՝ Բ. արմատը կունենայ կրաւորակերպ խոնարհում. օր. գող-ան-ամ՝ գող-սոց-այ, զղչ-ան-ամ՝ զղչ-աց-այ:

Բայառութիւն են կազմում մերկամ, լուամամ, բանամ, բառամ թանամ բայերը, որոնք իմաստին նայելով կարող են ունենալ թէ ներգործակերպ և թէ կրաւորակերպ խոնարհում. օր. լուացի և լուացայ, թացի և թացայ (թրջուեցայ) և այն:

գ) Գ. լծորդութեան մէջ եթէ Առաջին արմատը բաղադրեալ է՝ Բ. արմատը կունենայ կրաւորակերպ խոնարհում. օր. ջեռ-ա-ուլ ջեռ-այ, ցաս-ա-ուլ ցաս-ա-այ (փոխանակ ցասի-այ, տես § 96, բ. ծան. և բացառութիւն):

Բայառութիւն են կազմում առ-ն-ուլ, թք-ն-ուլ, ընկե-ն-ուլ, լ-ն-ուլ, խ-ն-ուլ բայերը, որոնք իմաստին նայելով կարող են ունենալ թէ ներգործակերպ և թէ կրաւորակերպ խոնարհում. օր. առ-ի և առ-այ, լց-ի և լց-այ, թք-ի և թք-այ և այն:

դ) Առաջին արմատում Բ. լծորդութիւն ունեցող բայերը՝ երկրորդ արմատում ներգործակերպ խոնարհում ունին. օր. ամաչեմ—ամաչեց-ի, տեսան-եմ—տես-ի:

ե) Առաջին արմատում Գ. լծորդութիւն ունեցող բայերը՝ երկրորդ արմատում կրաւորակերպ խոնարհում ունին. օր. դատիմ—դատեց-այ, տեսան-իմ—տես-այ:

զ) Առաջին արմատում չ, նչ բաղադրիչներն ունեցրդ բայերը (96, բ) երկրորդ արմատում կրաւորակերպ խոնարհում ունին, բացի ապառնիի եղ. 2, 3 և յոդն. բոլոր գէմքերից. օր. երկ-նչ-իմ—երկ-ե-այ, ապ. 1 գէմք—երկ-ե-այց (կը.), 2 դ. երկ-ի-յէն և այն (ներգ.):

§ 107. Երկրորդ արմատից կազմուած ձևերը յօդ չունին, այլ վերջաւորութիւններն աւելացնում են ուղղակի արմատին վերայ. օր. գործեց-ի, դատեց-այ, տես-ի երկ-ե-այ և այն:

§ 108. Անցեալ կատարեալի վերջաւորութիւններն են

Ներգործակերպ	Կրաւորակերպ
ի, էր,—, առ, իտ, ին.	այ, ար, աւ, առ, այտ, ան:
Օր. տես-ի, -եր, —	տես-աք, -իք, -ին.
գործեց-ի, -եր -եաց,	գործեց-աք, -իք, -ին.
կը. տես-այ, -ար,-աւ,	տես-աք, -այք, -ան.
գործեց-այ -ար, -աւ,	գործեց-աք, -այք, -ան:

ԴԱՆ. 1. Կատարեալի եզ. Յ դէմքը ենթարկում է շեշտիւ աղդեցութեան և աճումի, այնպէս որ վերջի փակ փանկի է գիրը փոխում է է-ա, ա-այ, ի-է, է-ա- և է (տես § 25). օր. փրկեց=փրկէց, մատրց=մատրց, անիծ=անէծ, գըտ=գէտ, մըտ=մատ:

ԴԱՆ. 2. Անցեալ կատարեալը սկզբնական հայերէն լեզուում կաղմուելիս է եղել և է վերադիրով, որ այժմ գործածում է ա) ներգ. եզ. Յ դէմքում, եթէ այդ ձեւը միավանկ լինի, (որ ձայնաւորի առաջ ներդաշնակութեան օրինքով փոխում է է-ի). օր. է-տես, է-հատ է-առ. է-ած. բ) բոլոր դէմքերում՝ եթէ բացի արմատը բաղկանում է միայն մի բաղաձան տառից. օր. բայարմ. *Կ. կատ.-է-կ-ի, ե-կ-իր, ե-կ-ն, ե-կ-աք, ե-կ-իք, ե-կ-ին, բայարմ. *Դ. (դ-ն-եմ). կատ. է-դ-ի, ե-դ-եր, ե-դ, ե-դ-ա-ք, ե-դ-իք, ե-դ-ին, բայարմ. *Տ. (տ-ա-մ), կատ. ե-տ-ու, ե-տ, տ-ու-աք, ե-տ-ուք, ե-տ-ուն:

ԴԱՆ. 3. Անցեալ կատարեալը կազմուելիս է եղել և բայարմատի կրկնութեամբ, որ ձեռվ այժմ մնացել է միայն մի բայ առնէծ (=ար-ն-եմ-29, բ) կատ. ար-ար-ի. (աշխարհաբարում առանց կրկնութեան-արի):

§ 109. Պարզ ապառնիի վերջաւորութիւններն են

Ներգործակերպ	Կրաւորակերպ
իյ, յէս, յէ, յրտ, ջէտ, յէն.	այյ, յի՞ս, յէ, յրտ, ջէտ, յի՞ն.

ԴԱՆ. Բաղազրեալ արմատի ց գիրը ապառիլ վերջաւորութեան և ջ տառերի առաջ փոխում է ա-ի (§ 29, գ) օր.

Ներգ. հատ-ից, -ցես, -ցէ, հատ-ցուք, -չիք, -ցէն.	գործեց-ից, գործես-ցես, -ցէ, գործես-ցուք, -չիք, -ցեն.
կրաւ. հատ-աց, ցիս, -ցի, հատ-ցուք, -չիք, -ցին.	գործեց-աց, գործես-ցիս, -ցի, գործես-ցուք, -չիք, -ցին,

մատեաց (փոխ. մատի-աց),¹⁾ մատի-ցես, -ցէ, -ցուք, -չիք.
[-ցէն²⁾]

¹⁾ Տես § 27, դ:

²⁾ Տես § 106, դ:

Տերգործակերպ	Կրաւորակերպ
' (առանց շ-ի), էս —, իր, այդ կամ արու-:	

ԴԱՆ. 1. Եղակի 2 դէմքը վերջաւորութիւններն են ներգործակերպ խոնարհումի մէջ ձգում է նաև վերջին տառը, եթէ դա արմատ միան չէ. (երկու բայ՝ կալ-ն-ում, առ-ն-եմ ձգում են նաև արմատական և ու գրեր—կն, արա, փոխանակ կալ, արար: Համեմատել գաւառական բն, կե, տու և այն ձևերը, փոխանակ բեր, կեր, տուր): Միւնոյն ժամանակ շեշտի աղդեցութեամբ նոյն փոփոխութիւններին է ենթարկում, ինչ որ տեսանք կատ. եզ. Յ դէմքում. (§ 108, ծան. 1):

ԴԱՆ. 2. Ի թուզ բաղադրիչը (§ 96, բ) այս և արու- վերջաւորութեան հետ միանալով դառնում է է-յը (§ 27, դ), երութ (§ 20) օր. փախ-է-այք=փախ-է-այք, փախ-է-րութ=փախ-է-արութ=փախ-է-րութ:

ԴԱՆ. 3. Կրաւորակերպ խոնարհումի մէջ էր վերջաւորութիւնը գործածում են անխատիր բոլոր արմատները, իսկ էց բաղադրիչ ունեցող արմատները կարող են նաև չգործածել այդ վերջաւորութիւնը:

Օր. Ներգ. տես,	տես-է.ք.
(արմ. լուծ) լոն,	լոն,
(արմ. գործեց) գործեա,	գործեց-է.ք
Կրաւ.	
տես-իր,	տես-այք, տեսարութ.
փախ-իր,	փախե-այք, փախե-րութ.
գործեաց կամ գործեց-իր, գործեց-այք, -արութ:	

ԴԱՆ. 4. Հրամայականն ունի մի ուրիշ ձև ևս, որ ցորդորական նշանակութիւն ունի. սա կազմում է բայի ապառնի յոդն. 2 դէմքից, վերջին + գիրը եղակիում փոխելով ո-ի, իսկ յոդնակիում անփոփոխ պահելով.

Օր. Ներգ. և Կրաւ.	տեսջիր, տեսջի.ք.
գործեսջիր, գործեսջի.ք:	

§ 111. Կերէայ բերբայի վերջաւորութիւնն է աշ կամ օշ, որ գործածում է միայն ներգործական և չեղոքական բայերի մէջ: Կրաւորակերպ սեռը ներկայ դերբայ չունի: Բ և Գ լծորութեան մէջ (հասարակ բայերում) ներկայ դերբայը կարող է կազմուիլ թէ Ա և թէ Բ արմատներից. օր. աղաց-ող, տեսան-ող (Ա. արմ.) կամ տես-ող (Բ. արմ.), ծնան-ող (Ա. արմ.), ծն-ող (Բ. արմ.), առ-ող, ընկեց-ող:

ԾԱՆ. Ներկայ դերբայի նախկին վերջաւորութիւնները առ և գրաբարում գործածում են միայն մի քանի բառերում իբրև ածանցական մասնիկներ—ջնջան, փակ-ան, գաղ-ան, կենդ-ան, զգ-օն, գործ-օն: (Համեմատել աշխարհաբարում կծ-ան, հաջ-ան, խած-ան, փաղ-ան և այլն):

§ 112. Անցեալ բերդայի վերջաւորութիւնն է եալ: Բ. և Գ. լծորդութեան մէջ էյ բաղադրական մասնիկը յաճախ դուրս է ընկնում անցեալ դերբայում: Այս դերբայը պատկանում է անխտիր բոլոր սեռերին, այնպէս որ առեւ-եալ նշանակում է թէ տեսած և թէ տեսնուած: Օր. աղաց-եալ, սիր-եալ կամ սիրեց-եալ, տես-եալ, գատ-եալ կամ գատեց-եալ, թող-եալ, ընկեց-եալ:

ԾԱՆ. Թող բաղադրեալ արմատները, որոց առաջին արմատը բաղդուած է չ, ոչ մասնիկներով (96, բ) անցեալ դերբայը կազմում են իրանց անցողական ձևերի Բ. արմատներից (§ 116): օր. մարտոց-եալ, թաք-ուց-եալ:

ԳԼ. ԺԴ. ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԶԵՒԵՐ.

§ 113. Յարակագործ, գերակատար և ստորադասուհանի անցեալ ձեւերը կազմում են բայի անցեալ դերբայից և էական բայից: Իսկ բայաբանական կազմում է ապառնի դերբայից և էական բայից:

ա) յարակագործ՝ անցեալ դերբայից և էական բայի սահմ. ներկայից. օր. տեսեալ, խօսեցեալ է՛, է:

բ) գերակատար՝ անցեալ դերբայից և էական բայի անցեալ անկատարից. օր. տեսեալ, խօսեցեալ է՛, է՛:

գ) ստորադասուհանի անցեալ՝ անցեալ՝ անցեալ դերբայից և էական բայի ստորադաս. ապառնիից. օր. տեսեալ, խօսեցեալ է՛, է՛:

դ) բայաբանական՝ ապառնի դերբայից և էական բայի սահմ. ներկայից. օր. տեսանելոց, խօսելոց է՛, է:

§ 114. Որովհետեւ անցեալ դերբայը թէ ներդորժականի և թէ կրառարականի իմաստ ունի (§ 112): ուստի նորանով կազմուած երկրորդական ձևերն ել երկու սեռի նշանակութիւն ունին (տեսեալ է=տեսել է, տեսնուել է): Բայց գործածու-

թեան մէջ բայի սեռը որոշուում է խոնարհումի տարբեր եղանակներով:

ա) Եթէ բայը նէր գործականի իմաստ ունի՝ էական բայը միշտ դրում է եղ. Յ գէմքում բողոք թուերի և դէմքերի համար, իսկ ենթական (որ ցոյց է տալիս, թէ ով է կատարել գործողութիւնը) դրում է սեռական հոլովով. օր. տեսեալ է ի՛, տեսեալ է մը, տեսեալ է նոցա, տեսեալ է աշակեցաց, գործեալ էյէ հանդիսաց (ես տեսել եմ, մենք տեսել ենք, նոքա տեսել են, աշակերտները տեսել էին, մանուկները գործած լինին):

բ) Եթէ բայը կրատորականի և չէզոքականի իմաստ ունի՝ էական բայը խոնարհում է բողոք դէմքերով ու թուերով և ենթական դրում է ուղղական հոլովով. օր. տեսեալ է՛ և տեսեալ է՛ մէ, տեսեալ է՛ նոցա, գնացեալ է՛ աշակերտէ՛, չարուցեալ էյէ ո՞ս ի մեռելոց (տեսնուած եմ ես, տեսնուած ենք մենք, տեսնուած են նոքա, աշակերտները գնացել էին, ո՞ս մեռած տեղից վերլացած լինի):

ԾԱՆ. Է ի՛, է՛ նոցա ձևերը նշանակում են ես աւել, նա աւել, և է՛, նոցա սեռական հոլովները էական բայի նէրենքն են. այնպէս որ տեսեալ է ի՛ իսկապէս նշանակում է՛ ես ունիմ տեսած, և է՛ սեռական հոլովը ոչ թէ ենթակայ է ուսեւ է բային, այլ խնդիր է էական բային:

ԳԼ. ԺԴ. ԱՆՑՈՂԱԿԱՆ ԲԱՅԵՐ.

§ 115. Չէզոքական բայերը և շատ ներգործական բայեր ունին անցուշան ձև, որ ցոյց է տալիս, թէ բայի գործողութիւնը ինքը ենթական չէ կատարում, այլ ուղիշին է կատարել տալիս. օր. նստ-իմ—նստուցանեմ (նստեցնում եմ) զգենում—զգեցուցանեմ (հազցնում եմ):

§ 116. Անցողական ձևը կազմում է՝ նույտովիո բայի երկրորդ արմատին վերաց աւելացնելով ուց ածանցական մասնիկը (շեշտի տակ՝ ոյց § 21 և 25), որից յետոյ գրում է ան բաղադրական մասնիկը և Բ. լծորդութեան վերջաւորութիւնը. օր.

գն-ալ, Բ. արմ. գնաց. անցողական՝ գնաց-ուց-ան-ել.
մեծ-ան-ալ, Բ. արմ. մեծաց. անցող. մեծաց-ուց-ան-ել.
հնչ-ել, Բ. արմ. հնչեց. անցող. հնչեց-ուց-ան-ել.
զարկ-ան-ել, Բ. արմ. զարկ. անցող. զարկ-ուց-ան-ել.
ապր-իլ, Բ. արմ. ապրեց. անցող. ապրեց-ուց-ան-ել.
բուս-ան-իլ, Բ. արմ. բուս. անցող. բուս-ուց-ան-ել.
մած-ն-ուլ, Բ. արմ. մած. անցող. մած-ուց-ան-ել.

լն-ուլ, Բ. արմ. լց. (§ 106, գ. բաց.). անց. լց-ուց-ան-ել:

ԾԱՆ. 1. Թոյլ բաղադրեալ արմատները (§ 96, բ) անցողական ձեր կազմեիս՝ դուրս են ձգում և բաղադրիչը. օր. թագ-չ-իմ, Բ. արմ. թագ-է, անցող, թագ-ուց-ան-ել, ցաս-ն-ուլ, Բ. արմ. ցաս-է, անցող, ցաս-ուց-ան-ել:

ԾԱՆ. 2. Կայ անցողականի բաղադրեալ ձեւ էլ, որ կազմւում է նախատիպ բայի անորոշ դերբայից և ուռ բայից, որը միայն խոնարհում է. օր. տամ, ետու ըմպել, տաց, տացէ խօսել (խմցնում եմ, խմցրի, խօսեցնում է, կխօսեցնէ):

Բայականութեան: Մի քանի բայեր անցողականի ուց մասնիկի շ գերը փոխում են և և զբերի. օր. կոր-ուս-ան-ել, փլ-ուս-ան-ել, ընկլ-ուս-ան-ել (փոխանակ կոր-ուց-անել, փլ-ուց-անել, ընկլ-ուց-ան-ել՝ կորնչիմ, փլչիմ և ընկլնում նախատիպ բայերից): Մասնէլ բայը անկանոն ձևով կադմում է անցողականը—մուծանել (փոխանակ մտուցանել):

§ 117. Բոլոր անցողական բայերը ներգործական սեռի են և ունին ներգործակերպ խոնարհում երկրորդ լծորդութեամբ, առ բաղադրական մասնիկով Ա. արմատում:

§ 118. Ա Լ Ի Ւ Ս Ա Կ Բ Ա Յ Յ Ա Յ Ն Ո Ն Ա Ի

Արմատ	Ա Բ Ա Զ Ս Ա Հ Մ Ա Ն Ա Կ Ա Ն	Ա Ր Ա Մ Ս Ա Ր Ա Դ Ա Ս	Ա Ր Ե Լ Ա Կ Ա Ն	Դ Ե Ր Բ Ա Յ Յ		Ր Ի Ս Ո Ն Ա Ր Հ Ա Ո Ւ Մ Ն Ե Ր Ի	Ե Բ Կ Ա Ր Ո Ր Գ Ո Ւ Մ Ս Ա Յ Տ Ի Ս	Ա Բ Կ Ա Ր Ո Ր Գ Ո Ւ Մ Ս Ա Յ Տ Ի Ս	Հ Ր Ա Մ Ա Յ Ա Կ Ա Ն	Հ Ր Ա Մ Ա Յ Ա Կ Ա Ն	Հ Ր Ա Մ Ա Յ Ա Կ Ա Ն	Հ Ր Ա Մ Ա Յ Ա Կ Ա Ն	
Եղանակ	Ա Ա Հ Մ Ա Ն Ա Կ Ա Ն	Ա Տ Ո Ր Ա Դ Ա Ս	Ա Ր Ե Լ Ա Կ Ա Ն	Դ Ե Ր Բ Ա Յ Յ		Ա Ա Հ Մ Ա Ն Ա Կ Ա Ն	Վ ա ր պ ա ր ե ա լ	Վ ա ր պ ա ր ե ա լ	Վ ա ր պ ա ր ե ա լ	Վ ա ր պ ա ր ե ա լ	Վ ա ր պ ա ր ե ա լ	Վ ա ր պ ա ր ե ա լ	
Ժամանակ	Ն ե ր կ ա յ	Ա ն ց . ա ն կ ա տ ա ր	Ա պ ա ռ ն ի	Ն ե ր կ ա յ	Ա ն ո ր ո շ	Ա պ ա ռ ն ի	Ա ն ց . կ ա տ ա ր ե ա լ	Վ ա ր պ ա ր ե ա լ	Ա ն ց . կ ա տ ա ր ե ա լ	Վ ա ր պ ա ր ե ա լ	Վ ա ր պ ա ր ե ա լ	Վ ա ր պ ա ր ե ա լ	
ՊԱՐՁ.													
Ներգ. Աղ	Աղ-ամ, աս, այ — ամք, այք, ան	Աղ-այի, այիր, այր — այաք, այիք, ային	Աղ-այց-եմ, ես, է — եմք, էք, են	մի Աղ-ար — այք	Աղ-ալ	Աղ-ալոց	Աղ-ԱՅ	Աղ-ից ի, եր, — աք, իք, ին	Աղ-ԱՅ-ից, ցես, ցէ — ցուք, ջիք, ցեն	Աղ-ԱՅ	Աղ-ԱՅ-ող	Աղ-ԱՅ-եալ	
> ԳՈՐԾ	ԳՈՐԾ-եմ, ես, է — եմք, էք, են	ԳՈՐԾ-էի, էիր, էր — էաք, էիք, էին	ԳՈՐԾ-ից-եմ, ես, է — եմք, էք, են	մի ԳՈՐԾ-եր — էք	ԳՈՐԾ-ել	ԳՈՐԾ-ելոց	ԳՈՐԾ-Ց	ԳՈՐԾԵՑ-ի, եր, — աք, իք, ին	ԳՈՐԾԵՑ-ից, ցես, ցէ — ցուք, ջիք, ցեն	ԳՈՐԾԵՑ	ԳՈՐԾԵՑ-ող	ԳՈՐԾԵՑ-եալ	
Ար. ԴԱՏ	ԴԱՏ-իմ, իս, ի — իմք, իք, ին	ԴԱՏ-ի, էիր, էր — էաք, էիք, էին	ԴԱՏ-ից-իմ, իս, ի — իմք, իք, ին	մի ԴԱՏ-եր — էք	ԴԱՏ-իլ	ԴԱՏ-իլոց	ԴԱՏ-Ց	ԴԱՏ-ից ի, եր, — աք, իք, ին	ԴԱՏ-ից-ից, ցես, ցէ — ցուք, ջիք, ցեն	ԴԱՏ-Ց	ԴԱՏ-Ց-ող	ԴԱՏ-Ց-եալ	
ԲԱՂԱԴՐԵԱԼ.													
Ներգ. ՀԱՏ-ԱՆ	ՀԱՏԱՆ-եմ, ես, է — եմք, էք, են	ՀԱՏԱՆ-էի, էիր, էր — էաք, էիք, էին	ՀԱՏԱՆ-ից-եմ, ես, է — եմք, էք, են	մի ՀԱՏԱՆ-եր — էք	ՀԱՏԱՆ-ել	ՀԱՏԱՆ-ելոց	ՀԱՏ	ՀԱՏ-ի, եր, — աք, իք, ին	ՀԱՏ-ից, ցես, ցէ — ցուք, ջիք, ցեն	ՀԱՏ	ՀԱՏ-ող	ՀԱՏ-եալ	
Ար. ՈԽԱ-ԸՆ	ՈԽԱԸՆ-իմ, իս, ի — իմք, իք, ին	ՈԽԱԸՆ-էի, էիր, էր — էաք, էիք, էին	ՈԽԱԸՆ-ից-իմ, իս, ի — իմք, իք, ին	մի ՈԽԱԸՆ-իր — իք	ՈԽԱԸՆ-իլ	ՈԽԱԸՆ-իլոց	ՈԽԱ	ՈԽԱ-այ, ար, աւ — աք, այք, ան	ՈԽԱ-այց, ցիս, ցի — ցուք, ջիք, ցին	ՈԽԱ	ՈԽԱ-իր	ՈԽԱ-եալ	
ՊԱՐՁ.													
Ներգ. ԹՈՂ	ԹՈՂ-ում, ուս, ու — ումք, ուք, ուն	ԹՈՂ-ուի, ուիր, ոյր — ուաք, ուիք, ուին	ԹՈՂ-ուց-ում, ուս, ու — ումք, ուք, ուն	մի ԹՈՂ-ուր — ուք	ԹՈՂ-ուլ	ԹՈՂ-ուլոց	ԹՈՂ	ԹՈՂ-ի, եր, — աք, իք, ին	ԹՈՂ-ից, ցես, ցէ — ցուք, ջիք, ցեն	ԹՈՂ	ԹՈՂ-ող	ԹՈՂ-եալ	
ԲԱՂԱԴՐԵԱԼ.													
Ներգ. ԸՆԿ-ԵՆ	ԸՆԿԵՆ-ում, ուս, ու — ումք, ուք, ուն	ԸՆԿԵՆ-ուի, ուիր, ոյր — ուաք, ուիք, ուին	ԸՆԿԵՆ-ուց-ում, ուս, ու — ումք, ուք, ուն	մի ԸՆԿԵՆ-ուր — ուք	ԸՆԿԵՆ-ուլ	ԸՆԿԵՆ-ուլոց	ԸՆԿ	ԸՆԿԵՑ-ի, եր, — աք, իք, ին	ԸՆԿԵՑ-ից, ցես, ցէ — ցուք, ջիք, ցեն	ԸՆԿԵՑ	ԸՆԿԵՑ-ող	ԸՆԿԵՑ-եալ	
Ար. ԸՆԹԱ-ԸՆ	ԸՆԹԱԸՆ-ամ, աս, այ — ամք, այք, ան	ԸՆԹԱԸՆ-այի, այիր, այր — այաք, այիք, ային	ԸՆԹԱԸՆ-այց-եմ, ես, է — եմք, էք, են	մի ԸՆԹԱԸՆ-ար — այք	ԸՆԹԱԸՆ-ալ	ԸՆԹԱԸՆ-ալոց	ԸՆԹ	ԸՆԹԵՑ-այ, ար, աւ — աք, այք, ան	ԸՆԹԵՑ-այց, ցիս, ցի — ցուք, ջիք, ցին	ԸՆԹԵՑ	ԸՆԹԵՑ-իր	ԸՆԹԵՑ-եալ	
Խառն ԵՐԿ-ՆՉ	ԵՐԿՆՉ-իմ, իս, ի — իմք, իք, ին	ԵՐԿՆՉ-էի, էիր, էր — էաք, էիք, էին	ԵՐԿՆՉ-ից-իմ, իս, ի — իմք, իք, ին	մի ԵՐԿՆՉ-իր — իք	ԵՐԿՆՉ-իլ	ԵՐԿՆՉ-իլոց	ԵՐԿ	ԵՐԿԻ-այ, ար, աւ — աք, այք, ան	ԵՐԿԻ-այց, ցիս, ցի — ցուք, ջիք, ցին	ԵՐԿԻ	ԵՐԿԻ-իր	ԵՐԿՈՒԽ-եալ	

¹⁾ առև § 109, ծան. ²⁾ առ. § 110, ծան. 1. ³⁾ առ. § 108, ծան. 1, ⁴⁾ առ. § 111, ⁵⁾ առ. § 112, ⁶⁾ առ. § 105, ⁷⁾ առ. § 108, ծան. 2, ⁸⁾ առ. §§ 21, 25, 101, ⁹⁾ առ. § 105, ¹⁰⁾ առ. § 96, բ., ¹¹⁾ առ. § 106, զ., ¹²⁾ առ. § 110, ծան. 2, ¹³⁾ առ. 112, ծան..

Գլ. ԺԶ. ԶԱՐՏՈՒՂԻ ԲԱՅԵՐ.

§ 119. Մի քանի բայեր երկրորդ արմատը կազմելիս շեղ-
ւում են ընդհանուր կանոններից, որոնք բացատրուած են 96
և յաջորդ յօդուածներում, և նոյն խոլ երկրորդ արմատից կազ-
մուած ձևերում տարբերութիւններ ունին սովորական եղանա-
կից. այս տեսակ բայերը կոչւում են պարագաներ։ Սոքա են.

ա) աս-էմ, զիտ-էմ, կար-էմ, մարթ-էմ, թ. արմ. աս-այ,
զիտ-այ, կար-այ, մարթ-այ (§ 96, ա):

Լո-եմ, թ. արմ. Լու. կտր. լուայ, -ար և այն. ապ. լուայց,
լուի-ցես, -իցէ, -ցուք, -ջիք, -ցեն, հրմ. լուր:

Շան-աչ-եմ. թ. արմ. ժան-ի. Ճանիրաց
Յառնեմ (= յ+ար+ն+եմ). թ. արմ. Յարի. ապ. յարեայց,
յարի-ցես, -ցէ, -ցուք, -ջիք, -ցեն. հրմ. արի, արիք, անց.
դերը. յար-ուց-եալ:

Առ-ն-եմ (= ար+ն+եմ). թ. արմ. Արար (տես § 108,
Ժան. 3)). կտր. արարի և այն. արար-ից, արառ-ցես, -ցէ և այն.
Հրմ. արմ, արպէք:

Լի-ն-իմ. թ. արմ. Լի. կտր. չունի. ապ. լի-ցիմ, -ցիս,
-ցուք, -ջիք, -ցին. հրմ. լեր, լերուք. անց. դերը. լիեալ, լիալ:
Տա-ն-իմ, թ. արմ. Տար:

Ած-եմ, Կստ-իմ, Բեր-եմ, թ. արմ. Ած, Կստ, Բեր:
Երթ-ամ. կտր. չունի. ապ. երթ-այց, երթի-ցես, -ցէ,
-ցուք և այն. հրմ. երթ, երթայք: Կայս-Դյուքս, Դյուքս

թ. արմ. Կեր, կտր. կեր-այ, կեր-ար և այն. ապ. կերայց,
կերի-ցես, կերի-ցէ և այն. հրմ. կեր. կերայք, կերէք:

Եղանակ. թ. արմ. Եղ, կտր. եղէ, եղեր, եղեւ, եղաք, եղէք, եղեն.
ապ. եղէց, եղի-ցիս, -ցի և այն. հրմ. Եր, երուք

Ո. արմ. Գոմ. ստորադ. գու-ց-եմ, -ցես, -ցէ, -ցեմք,
-ցէք, -ցեն:

ը) Մի բաղաձայն դրից կազմուած արմատները (տես § 108,
Ժան. 2, ը):

Գ-ալ. թ. արմ. Եկ. կտր. Եկի, Եկիր, Եկն, Եկաք, Եկիք,

Եկին. ապ. եղիշց, եղեսցես, -եսցէ և ալլն. հրմ. Եկ, Եկալք:
Տ-ալ. Բ. արմ. ԵԾ, ՏՈՒ. կտր. ետու, ետուր, ետ, տուաք,
ետուք, ետուն. ապ. տաց, տա-ցես, -ցէ և ալլն. հրմ. տուր,
տուք: (կրաւ. տուիմ, անց. անկ. տուեալ լինէի, ստոր. տայցիմ,
կտր. տուալ, ապ. տացիմ, հրմ. տուեալ լեր):

Դ-ն-ել. Բ. արմ. ԵՊ, ԳԻ. կտր. եղի և ալլն, ապ. եղից,
դի-ցես, -ցէ և ալլն. հրմ. դիր, դիք:

ԳԼ. ԺԷ. ՊԱԿԱՍՍԱԽՈՐ ԲԱՑԵՐ.

§ 120. Պակասաւոր բայերը (§ 90, ծան.) չեն ունենում կամ
առաջին արմատը, կամ երկրորդ արմատը, կամ թէպէտ երկրու
արմատներն ևս ունին, բայց նոցանից կազմուած որ և է ձե.
գործածական չէ: Պակասաւոր բայերի պակասորդ ձեւերի փո-
խարէն գործածում են ուրիշ, նման նշանակութեամբ բայերի:
Համապատասխան ձեւերը:

§ 121. Առաջին արմատ չունին
Կեր-ալ, որ Ա. արմ. կազմում է ուտ-ել բայից.
Ըրբ-ի, » » » ըմպ-ել »

§ 122. Երկրորդ արմատ չունին
Ուն-իմ, որ Բ. արմ. կազմում է կալ-ալ բայից.
Ընկուն-իմ, » » » ընկալ-ալ »
Ուտ-եմ, » » » կեր-ալ »
Եմ, » » » եղ-է »
Գոմ, որ երկրորդ արմատ չէ առնում ուրիշ բայից:

§ 123. Մի որոշ ձեւ չունին.
Լի-ն-իմ. չունի անց. կատ. և գործածում է եղ-ան-իմ
բայից—եղէ, եղեր և ալլն:
Երթ-ամ. չունի անց. կատ. և գործածում է չոդ-ալ.
հրմ. Երթ և չոդ:

Դ. ՆԱԽՈԴԻՌՆԵՐ

ԳԼ. ԺԷ.

§ 124. Նորութիւն կրչում են զ, ի, (), ց, առ, ընտ, ըստ
մասնիկները, որոնք առանձին առնուած նշանակութիւն չու-
նին, բայց հոլովաւող բառերի առաջ դրուելով ստանում են
այլեւայլ նշանակութիւններ, որոշելով հոլովաւող բառի այլեւայլ
հանգամանքները, ինչպէս տեղը, պատճառը, ժամանակը և ալլն:
Այս մասնիկներից չ, առ, ընտ, ըստ գրչում են առանձին, իսկ
յ, ց և զ գրում են բառերի հետ միասին:

Այս և ուրիշ մասնիկներ նախկին հայերէն լեզուում միա-
նալիս են եղել բառերի արմատների հետ՝ նոր նշանակութիւն-
ներ տալով նոցա, և այնքան ներտ միացել են, որ այժմ գը-
ժուարութեամբ են որոշում արմատներից. օր. յ-առնեմ,
յ-առաջեմ, յ-աւելում, յ-ոյժ, գ-արթնուլ, գ-արկանել, գ-առան-
ցել, գ-զենուլ (զ-գենու), զգոյշ. առ-ոգանել, առ-անձինն,
առ-աւել, գ-առ-անցեմ, առ-ողջ. ց-արդ, ց-երեկ. ընդ-ունիմ,
ըն-կալնում, ըն-կինում, ըմ-պեմ. ն-ստիմ, ն-շոյլ և ալլն:

§ 125. Այս նախղիրները հոլովական բառերի սկիզբը
դրուելիս՝ եթէ հոլովական բառն ունի որոշեալ հայցականի
կամ բայցառականի նախղիրներ զ, ի՝ այս վերջինները դուրս
կձգուին. օր. հայց. զնա, զնոսա, զտուն. նախղիրով առ նա,
առ նոսա, ի տուն. բաց. յահեկէ, ի նմանէ, ի բէլալ. նախ-
ղիրով ընդ ահեկէ, ըստ նմանէ, զբէլալ:

ԾԱՆ. Միայն առ նախղիրը բացառականի հետ գործածուելիս՝
բացառականը պահում է իւր և նախղիրը. օր առ. ի նմանէ, առ ի մէնչ:

Ա. Զ. ՆԱԽՂԻՔԻՐ.

§ 126. Զ նախղիրը բայի որոշեալ հայցական կազմելուց՝
զործածում է նաև

ա) Տառապահ հոլովի հետ զարդարել բայի մօտ, և ցոյց է տալիս
այն առարկան, որի վերաց կամ որոշ զարկւում է. օր. հարկանել
զքարի, զգետնի. հարկանիլ զամօթի, զգողանի, զգիմի:

բ) Բացառականի հետ և նշանակում է

1) (Առարկայի) մասին. օր. տրանջել զումեքէ, խօսել զծեառնէ, լիշել զհարց, վկայել զեղբօրէ:

2) Վերայից, մակերեսոյնեց. օր. կախել զփայտէ, զծառոյ, կապել զորմոյ:

3) Բայտառականի նշանակութեամբ. օր. ունել (բոնել) զծեռանէ, զհանդերձից, գոհանալ զԱստուծոյ, կախել զեղջերաց, զկերաց: զ) Գործիականի հետ և նշանակում է

1) Ճռ-ջջը, ճռերը. օր. նստել զքաղաքաւ, գնալ զեղերը, գալ զկէս զիշերաւ, զմտաւ ածել:

2) Վերայից. օր. ծիծաղիլ զարամը, արկանել զանձամը, այր զարամը ելանել:

3) Բայտառականի իմաստով անցանել բալին մօտ, օր. անցանել զամենելումբք, անցանել զպատուիրանաւ, զանցանել զբանիւ:

Բ. Ի (3) ՆԱԽԴԻԲ.

§ 127. Ի (1) նախդիրը բացի բացառական հոլով կազմելուց զործածւում է նաև

ա) Հայցականի հետ և նշանակում է

1) Ա-շշութեան, դեպի. օր. երթալ ի քաղաք, մտանել ի տուն, հայել լերկինս, դիմել ի չախ:

2) Մէջ փոխանուն, անուն. օր. լինել ի հայր, լինել յորդիս, ասել ի խրատ, համալել ի մարդ, ունել ի ծառախ:

3) Գործիականի իմաստով. օր. երդնուլ յանուն Աստուծոյ, մաշել ի սուր և ի հոռը, լղել ի ձեռն ուրուք, ի պատճառս ձեր:

4) Անորոշ զերբայի հետ՝ ժամանակ. օր. ի զալ զարնան, լելանեն ընդ առաջ, ի խօսեն ընդ միմեանս:

5) Անորոշ զերբայի հետ՝ նպատակ. օր. եկեալ եմ ի լոել, ժողովեցան ի գատել, ամբարձ զծեռն ի սպանանել:

բ) Տրականի հետ և նշանակում է

1) Մէջ. օր. նստել ի տան, ի քաղաքի, թաղիլ լերկը, կալ ի բանի:

2) Համար, պատճառով. օր. ճչել առ ցաւս, առ օր մի, առ այր

2) Վերայ. օր. նստել ի խաւանակի, ազանել ի լերին, բեեռել ի խաչի:

‘ԾԱՆ. 1. Եթէ հոլովական բառի հոլովիչներն են և կամ և է նախդրով արականը բացառականի ձև կստանա և երկդիմութիւն կը պատճառէ (օր. ի մարդոց, ի սեղանոց կնշանակէ մարդից, սեղանից, և ոչ թէ մարդի մէջ, սեղանի վերաց). Եց երկդիմութիւնը չպատճառելու համար՝ ացդպիսի բառերը իրանց և և հոլովիչների փոխանակ գործ են ածում է հոլովիչ, կամ փոխանակ տրականի զրւում են հացական հոլովով. օր. առ սաք վԱստուած ի մարմնէ, մարդ ի պատճառէ էր. եղին զիս ի զբէ. բնակել ի լոցս, ի սէր, ի մարդն, հեղձանել ի ջուր:

‘ԾԱՆ. 2. Նոցն պատճառով երբ բառը ցողնակի լինի՝ տրական հոլովով չի գործածուի է նախդիրի հետ, որ չտայ բացառականի իմաստ: Եց դէպիում տրականի փոխանակ գործածուում է հացական հոլովը. օր. նստել ի տունս, ի քաղաքս, կալ ի բանս. Աւքեան յոզնակի հացականի հետ գործածուելիս է նախդիրը տալիս է բառին թէ տրականի և թէ հացականի իմաստ. այսպէս է ոտնա, է ոտնա նշանակում է թէ բէռէ տները, քաղաքները (§ 127, ա, 1) և թէ գներում, շաղանէցում (§ 127, բ, 1):

Գ. Յ ՆԱԽԴԻԲ.

§ 128. Յ նախդիրը զործածւում է միայն հայցականի հետ և նշանակում է

1) Մինչեւ (մի տեղ, մի ժամանակ, մի աստիճան). օր. երթիցուք ցնեթէկէմ, զայ ցտեղին, ցայս վայր խօսել, ցայդ և ցերեկ, ցերեկ վորձես, ուտել ցյագ, կրուել ցմահ:

2) Տրականի նշանակութեամբ ասել, հարցանել բայերին մօտ. օր. ասէ ցաշակերտս, որ խօսէր ցիս, հարցին ցնա:

Դ. ԱՐ ՆԱԽԴԻԲ.

§ 129. ԱՐ նախդիրը զործածւում է

ա) Հայցականի հետ և նշանակում է

1) Ա-շշութեան, դեպի (շնչաւոր առարկաների մօտ). օր. կարդալ առ Աստուած, երթալ առ նա, զալ առ բարեկամս:

2) Համար, պատճառով. օր. ճչել առ ցաւս, առ օր մի, առ այր

յիսուն դահեկան, գործել առ չղիտանս, առ պարծել, առ հոգալ, առ սէր որդւոյ:

3) Աէրաբերութեամբ, համեմառութեամբ. օր. սէզ առ հանդերձս, հեղդ առ ուսումն, որպէս լուս առ խաւար:

4) Ունչ (համարել) բային հետ' մի բանի աւոյ, փոխանուի. օր. ունել առ լաւս, առ իմաստունս, առ Աստուած, առ յանշանս, առ ոչինչ զրել:

բ) Տրականի հետ և նշանակում է

1) Պատճառով. օր. աղաղակել առ վշտին, խօսել առ չարութեան, մեղանչել առ տգիտութեան:

2) Մօռ. օր. նստաւ առ ծովուն, խօսէր առ արքալի, կայը առ խաչին:

դ) Բացառականի հետ (և այս դէպօւմ բացառականի և նախդիրը երեխն դուրս է ընկնում) և նշանակում է

1) Կրշեց. օր. անհնարինքն առ ի մարդկանէ, հնարաւորք են առ ի լԱստուծոյ, խօսեցաւ առ ի քէն, առ ի հօրէ:

2) Պատճառով. օր. գործել առ երկիւղէ, առ հարկէ, առ ականէ (երեսանց, աչքը ընկնելու համար), առ ի չգոյէ (տես բ, 1):

3) Բայտառականի նշանակութեամբ. օր. մերկանալ առ ի զգեստուէ, միաձին առ ի հօրէ, օգնութիւն առ ի նոցանէ:

դ) Գործիականի հետ և նշանակում է

1) Մօռ. օր. առ քաղաքաւ, առ գետով, առ եղերք ծովուն, փոքր է այս առ այնու, զի՞նչ է յարդ առ ցորենով:

2) Փամանուի. օր. առ հարբքն մերովք, առ Արամաւ, առ ջըրհեղեղաւ, առ կենդանութեամբ հօր իւրոյ:

Ե. ԸՆԴ ՆԱԽԹԻԲ.

§ 130. Ընդ նախդիրը գործածում է

ա) Հայցականի հետ և նշանակում է

1) Հետ. օր. խօսել ընդ իշխանս, ընդ միմեանս, կցել տուն ընդ տուն, վիճել ընդ նոսա:

2) Աէրաբ. օր. անցանել ընդ զետ, ընդ ծով, մտանել ընդ

դուռն, անցանել ընդ հուր և ընդ ջուր, ծիծաղել ընդ միտու:

3) Աէր. օր. մի լիցի կռիւ ընդ իս և ընդ քեղ, ընդ հովիւս իմ և ընդ հովիւս քո, չիք խտիր ընդ բազում և ընդ սակաւ:

4) Գէռի մէ հոշմ. օր. գնաց ընդ արկելս, հայել ընդ երկինս, ընդ նոսա:

5) Աէր անգամ, միահանուս. օր. ընդ հեծեալ և ընդ հետեակ, ընդ այր և ընդ կին, ասել ընդ մի, ընդ ամենայն, ընդ բնաւ:

6) Անորոշ գերբայի կամ բայածականի հետ' ժամանակ. օր. ընդ ծագել արեգականն, ընդ բուսանեն չորացաւ, ընդ տեսանեն սքանչացաւ, ընդ երեւումն հրաշալուն. նոյնպէս՝ ընդ առաւոտս, ընդ երեկս:

7) Ուրախանալ, տրտմել, նախանձիլ, զարմանսալ և նման բայերի հետ' կէրց. օր. ուրախանալ ընդ տեսիլն, տրտմել ընդ մահ, զարմանային ընդ վարդապետութիւն նորա:

բ) Սեռականի հետ և նշանակում է փոխանուէ, համար. օր. ակն ընդ ական, ատամն ընդ ատաման, տացես նոցա ընդ իմ և ընդ քո, ընդ ամենայն դատարկ բանի համարս տալոց էք:

դ) Տրականի հետ և նշանակում է

1) Հետ, (գլխաւորապէս եղակիի հետ գործածուելիս), օր. խօսել ընդ նմա, ընդ իշխանին, ընդ որում համբուրեցից:

2) Վէրայ. օր. հոգալ ընդ տան, ընդ ընտանեաց, գութ ունել ընդ ումեք, անցանեն նեղութիւնք ընդ մարդկան:

դ) Բացառականի հետ և նշանակում է

1) Կրշեց. օր. ընդ աջմէ, ընդ ահեկէ, ընդ հիւսիսոյ, ընդ հարաւոյ:

2) Բայտառականի նշանակութեամբ. օր. խնդրել իրաւունս ընդ Աստուծոյ, կապել ընդ որթոյ, ընդ մեր հեղգութենէն եղեւ, ընդ երկլւդէն:

դ) Գործիականի հետ և նշանակում է

1) Տակ. օր. ընդ ծառով, ընդ հովանեաւ թւեոյ, ընդ երկրաւ, ընդ հողով:

2) Աօռը, հրշմը, շարշմը. օր. մանկունքս կան ընդ ինեւ, ընդ այնու ժամանակաւ, պատի ընդ հիւսիսիւ, ած ընդ միջով քով:

Զ. ԸՍ ՆԱԽԳԻՔ.

00

§ 131. Ըստ նախգիքը դորձածում է

ա) Հացականի հետ և նշանակում է

1) Պարու, մը բառի այն իռջը. օր. ելանել ըստ դուռն, ըստ քաղաքն, ելանել ըստ հրաման, գերձանել ըստ վտանգս, անցանել ըստ չափ:

2) Չափով, համեմատ. օր. բաժանել ըստ ազգս և ըստ լեզուս, առնուլ հարկ ըստ տուն, ըստ երդ, ըստ գլուխ, շրջել ըստ աշխարհականս, ըստ աճել ջրոյն, ըստ պակասել լուսոյն:

բ) Տրականի հետ և նշանակում է

Համայնք, համան. օր. եղիցի քեզ ըստ բանի քում, արտըլն ըստ հրամանին, արար մարդ ըստ պատկերի, ըստ նմանութեան իւրում, դատիլ ըստ լանցանաց, ըստ կարծեաց:

գ) Բացառականի հետ և նշանակում է

2) Միմեան, եպեկց, յաջորդութար. օր. չայկ և որ ըստ նմանէ նահապետք, մի ըստ միոջէ, ամ ըստ ամէ, օր ըստ օրէ:

2) Կոշից. օր. ըստ հիւսիսոյ, ըստ հարաւոյ, ըստ արևելից կուսէ, ըստ նախախնամութենէ Աստուծոյ:

ՀՀ Ազգային գրադարան



NL0596685

91 - 5